# ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
# ՀՖՖ ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ
# ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԵՎ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ

**(նոր խմբագրություն)**

ԵՐԵՎԱՆ 2012

**ՀՖՖ-Ի ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ**
**ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԵՎ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Սահմանումներ ........................................................................................ 6

ԳԼՈՒԽ I. Ներածական դրույթներ ............................................................ 8
Հոդված 1. Գործողությունների շրջանակը .......................................... 8

ԳԼՈՒԽ II. Խաղացողների կարգավիճակը................................................ 8
Հոդված 2. Խաղացողների կարգավիճակը ........................................ 8
Հոդված 3. Սիրողական կարգավիճակի վերականգնումը .................. 8
Հոդված 4. Գրանցման պահպանումը գործունեության դադարեցումից հետո ......................................................... 9

ԳԼՈՒԽ III. Խաղացումների գրանցումը.................................................... 9
Հոդված 5. Գրանցումը.......................................................................... 9
Հոդված 6. Գրանցման ժամանակահատվածները............................. 10
Հոդված 7. Ֆուտբոլիստի անձնագիրը .............................................. 10
Հոդված 8. Գրանցման դիմումը ......................................................... 11
Հոդված 9. Միջազգային տրանսֆեր.................................................. 12
Հոդված 10. Միջազգային տրանսֆերային սերտիֆիկատ (ՄՏՍ) ..... 12
Հոդված 11. Ներքին տեղափոխություն ............................................. 12
Հոդված 12. Խաղացողների վարձակալումը ..................................... 12

ԳԼՈՒԽ IV. Պայմանագրային կայունության պահպանումը պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների և ակումբների միջև............................ 13
Հոդված 13. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի և Ակումբի հարաբերությունները..................................................... 13
Հոդված 14. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի և Ակումբի միջև կնքվող պայմանագրի հատուկ պայմաններ ................ 14
Հոդված 15. Պայմանագրի գրանցումը ............................................. 15
Հոդված 16. Պայմանագրի դադարեցումը հիմնավոր դրդապատճառներով .................................................... 15
Հոդված 17. Պայմանագրի դադարեցումը մարզական տեսանկյունից հիմնավոր դրդապատճառներով........... 15
Հոդված 18. Խաղաշրջանի ընթացքում պայմանագրի դադարեցման սահմանափակում .................................. 15
Հոդված 19. Առանց հիմնավոր դրդապատճառի պայմանագրի դադարեցման արդյունքում ծագող հետևանքները....... 16

ԳԼՈՒԽ V. Մարզումային փոխհատուցումը և համերաշխության մեխանիզմը .................................................. 18
Հոդված 20. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի Մարզումային փոխհատուցումը .................................................. 18
Հոդված 21. Սիրողական ֆուտբոլիստի Մարզումային փոխհատուցումը .................................................. 18
Հոդված 22. Համերաշխության մեխանիզմը .................................................. 18

ԳԼՈՒԽ VI. Վեճերի լուծման պալատ .................................................. 19
Հոդված 23. Վեճերի լուծման կարգը .................................................. 19

ԳԼՈՒԽ VII. Եզրափակիչ դրույթներ .................................................. 19
Հոդված 24. Կանոնակարգի՝ ուժի մեջ մտնելը .................................................. 19
Հոդված 25. Պատասխանատվությունը կանոնակարգի դրույթները խախտելու համար .................................................. 20

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Ֆուտբոլիստների ազատ արձակումը ՀՀ Ազգային հավաքականներում հանդես գալու համար .................................................. 21
Հոդված 1. Սկզբունքներ .................................................. 21
Հոդված 2. Ֆինանսական դրույթներ և ապահովագրություն .................................................. 22
Հոդված 3. Ֆուտբոլիստների իրավերքը .................................................. 22
Հոդված 4. Վնասվածք ստացած ֆուտբոլիստներ .................................................. 22
Հոդված 5. Արգելք ֆուտբոլիստների մասնակցության վրա .................................................. 23
Հոդված 6. Կարգապահական պատժամիջոցներ .................................................. 23

ՀԱՎԵԼՎԱԾ 2. Աշխատանքային պայմանագրի նվազագույն պահանջները .................................................. 24

ՀԱՎԵԼՎԱԾ 3 .................................................. 37

ԳԼՈՒԽ I. ՏՀՀ-ով իրականացվող միջազգային տրանսֆերը կարգավորող ընթացակարգ .................................................. 37
Հոդված 1. Գործունեության շրջանակ .................................................. 37
Հոդված 2. Համակարգ .................................................. 38
Հոդված 3. Համակարգից օգտվող կողմեր .................................................. 39
Հոդված 4. Ակումբների պարտականությունները .................................................. 40
Հոդված 5. Ասոցիացիաների պարտականությունները .................................................. 41
Հոդված 6. ՖԻՖԱ-ի ընդհանուր քարտուղարության դերը .................................................. 43
Հոդված 7. ՖԻՖԱ ՏՀՀ ՍՊԸ-ի դերը .................................................. 44
Հոդված 8. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների տրանսֆերը կարգավորող վարչական գործընթաց .................................................. 45

Հոդված 9. Պատժամիջոցներ ........................................................ 48

ԳԼՈՒԽ II. ՏՀՀ-ից դուրս իրականացվող ֆուտբոլիստների
միջազգային տրանսֆերը կարգավորող վարչական գործընթաց.......... 49
Հոդված 1. Սկզբունքներ ................................................................ 49
Հոդված 2. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստին ՄՏՍ տրամադրելը .......... 50
Հոդված 3. Սիրողական կարգավիճակ ունեցող
ֆուտբոլիստներին ՄՏՍ տրամադրելը............................ 52
Հոդված 4. Ֆուտբոլիստների վարձակալություն .............................. 52

ԳԼՈՒԽ III. Անչափահասների առաջին գրանցումն ու տրանսֆերը
կարգավորող ընթացակարգն ու ակադեմիաներում անչափահաս
ֆուտբոլիստների գրանցումը ............................................................. 53
Հոդված 1. Ընդհանուր դրույթներ .................................................... 53
Հոդված 2. Սկզբունքներ ................................................................ 54
Հոդված 3. Անդամ ասոցիացիաների պարտականությունները......... 54
Հոդված 4. Ենթակոմիտե ................................................................ 54
Հոդված 5. Ընթացակարգեր ............................................................ 55
Հոդված 6. Ընթացակարգի սկիզբը, փաստաթղթերի
ներկայացումը .................................................................... 55
Հոդված 7. Նախկին ասոցիացիայի հաստատումը
(դիրքորոշումը) ................................................................... 57
Հոդված 8. Փաստաթղթերի լեզուն ..................................................... 57
Հոդված 9. Վերջնաժամկետները ...................................................... 57
Հոդված 10. Որոշումների ծանուցումը, բողոք
ներկայացնելու կարգը ...................................................... 57
Հոդված 11. Ակադեմիաներում անչափահաս
ֆուտբոլիստների գրանցումը ........................................ 58

ԳԼՈՒԽ IV. Ներքին տեղափոխությունը
կարգավորող ընթացակարգ.............................................................. 59
Հոդված 1. Սկզբունքներ ................................................................ 59

ՀԱՎԵԼՎԱԾ 4. Մարզումային փոխհատուցում......................................... 60
Հոդված 1. Մարզումային փոխհատուցումը ...................................... 60
Հոդված 2. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի մարզումային
փոխհատուցման վճարումը ............................................. 60
Հոդված 3. Սիրողական ֆուտբոլիստի մարզումային
փոխհատուցման վճարումը ............................................. 61
Հոդված 4. Մարզումային փոխհատուցում վճարելու
պարտավորությունը .......................................................... 61

Հոդված 5. Մարզումային ծախսեր ..................................................... 63
Հոդված 6. Մարզումային փոխհատուցման հաշվարկը..................... 63

ՀԱՎԵԼՎԱԾ 5. Համերաշխության մեխանիզմը ........................................ 66
Հոդված 1. Համերաշխության բաշխում ............................................. 66
Հոդված 2 Վճարման ընթացակարգը .................................................. 67

ՀԱՎԵԼՎԱԾ 6 ........................................................................................... 68

ՀԱՎԵԼՎԱԾ 7 ........................................................................................... 70
Հոդված 1. Ընդհանուր դրույթներ....................................................... 71
Հոդված 2. Խաղացողների գրանցումը ............................................... 71
Հոդված 3. Պայմանագրի դրույթների պահպանումը......................... 71
Հոդված 4. Միջազգային տրանսֆերային սերտիֆիկատ .................. 71
Հոդված 5. Կարգապահական պատժամիջոցների կիրառումը ......... 72

ՀԱՎԵԼՎԱԾ 9 ........................................................................................... 73

ՆՇՈՒՄՆԵՐ .............................................................................................. 76

# ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Սույն Կանոնակարգում օգտագործված հասկացությունների սահմանումները.

1. **<u>Ասոցիացիա (Ընկերակցություն)</u>**-Տվյալ երկրի ՖԻՖԱ-ին անդամագրված ֆուտբոլային ղեկավար կառույց
2. **<u>Նախկին Ասոցիացիա</u>** - Այն ասոցիացիան է, որին պատկանել է նախկին Ակումբը
3. **<u>Նոր Ասոցիացիա</u>** - Այն ասոցիացիան է, որին անդամագրված է նոր Ակումբը
4. **<u>Ակումբ</u>** - Իրավաբանական անձ՝ անկախ կազմակերպաիրավական ձևից, կամ կազմակերպություն, որը թիմ(եր) է ներկայացնում ՀՖՖ-ի հովանու ներքո անցկացվող մրցումներին, ներդրումներ է կատարում ֆուտբոլիստների մարզման և ուսուցման ոլորտներում
5. **<u>Նախկին Ակումբ</u>** - Այն ակումբն է, որը լքում է ֆուտբոլիստը
6. **<u>Նոր Ակումբ</u>** - Այն ակումբն է, որին ֆուտբոլիստն անդամագրվում է
7. **<u>Կազմակերպված ֆուտբոլ</u>** – ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի կամ ՀՖՖ-ի հովանու ներքո կազմակերպված կամ նրանց կողմից լիազորված մրցումներ
8. **<u>Պաշտոնական խաղեր</u>** – Կազմակերպված ֆուտբոլի շրջանակներում անցկացվող խաղեր, ինչպիսիք են ազգային առաջնությունների, գավաթի խաղարկությունների, ակումբային միջազգային մրցաշարերի խաղերը, բայց ոչ ընկերական և փորձնական հանդիպումները
9. **<u>Պաշտպանված ժամանակահատված</u>** - Մինչև 28 տարեկան Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի՝ կնքված պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո երեք տարվա կամ երեք ամբողջական Մրցաշրջանների ժամանակահատվածն է: Եթե Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը պայմանագիրը կնքել է 28 տարին լրանալուց հետո, ապա Պաշտպանված ժամանակահատվածը պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա կամ երկու ամբողջական մրցաշրջանների ժամանակահատվածն է
10. **<u>Գրանցման ժամանակահատված</u>** – Ժամանակահատված, որի ընթացքում թույլատրված է ֆուտբոլիստի տեղափոխությունը մեկ Ակումբից մյուս Ակումբ ապագա կամ ընթացիկ մրցումներին մասնակցելու համար
11. **<u>Մրցաշրջան</u>** – Ֆուտբոլային տարվա կտրվածքով առաջին Պաշտոնական խաղով սկսվող և վերջին Պաշտոնական խաղով վերջացող ժամանակահատված

12. **Մարզումային փոխհատուցում** – Խաղացողների մարզումն ու զարգացումն ապահովելու նպատակով Ակումբի կողմից կատարված ուղղակի ներդրումների փոխհատուցում
13. **Միջազգային տրանսֆեր** - Խաղացողների տեղափոխությունը որևէ ասոցիացիայի ակումբից մեկ ուրիշ ասոցիացիայի ակումբ
14. **Ներքին տեղափոխություն** - Խաղացողների տեղափոխությունը ՀՖՖ-ի որեւէ ակումբից մեկ ուրիշ ակումբ
15. **Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ -** Պրոֆեսիոնալ կարգավիճակ ունեցող ֆուտբոլիստ
16. **Սիրողական ֆուտբոլիստ -** Սիրողական կարգավիճակ ունեցող ֆուտբոլիստ
17. **Ֆուտզալ** - Ֆուտբոլ մարզաձևն է, որը պետք է խաղալ համաձայն ֆուտզալի խաղի կանոնների՝ թողարկված ՖԻՖԱ-ի և Միջազգային ֆուտբոլային ասոցիացիաների խորհրդի ենթակոմիտեի համատեղ գործակցությամբ
18. **Ֆուտբոլիստի անձնագիր** – ՀՖՖ-ի կողմից խաղացողին տրամադրված անձնագիր
19. **Անչափահաս ֆոտբոլիստը** 18 տարին չլրացած ֆուտբոլիստն է:
20. **Ֆուտբոլային ակադեմիան** կազմկերպություն է, որի գլխավոր երկարաժամկետ նպատակն է ապահովել ֆուտբոլիստների շարունակական մարզումն անհրաժեշտ մարզումային միջոցների և ենթակառուցվածքների միջոցով: Սա գլխավորապես ներառում է (բայց չի սահմանափակվում) ֆուտբոլի մարզումային կենտրոնները, ֆուտբոլի մասնագիտացված ճամբարները, ֆուտբոլի դպրոցները և այլն:
21. **Տրանսֆերների համադրման համակարգը (ՏՀՀ)** - տրանսֆերների համադրման համակարգը (ՏՀՀ) տրանսֆերների վերաբերյալ տեղեկատվություն պարունակող էլեկտրոնային համակարգ է, որի միջոցով կատարվում են միջազգային տրանսֆերները: ՏՀՀ գլխավոր նպատակն է պարզեցնել ֆուտբոլիստների միջազգային տրանսֆերային գործընթացը, ինչպես նաև ապահովել տեղեկատվության թափանցիկությունն ու հոսքը:

Ծանոթություն: Անձանց վերաբերող տերմինները վերաբերում են երկու սեռերին: Յուրաքանչյուր եզակի հասկացությունը կիրառվում է նաև հոգնակի տարբերակով և հակառակը:

## Գլուխ I
## ՆԵՐԱԾԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**Հոդված 1. Գործողությունների շրջանակը**

1. Սույն Կանոնակարգով կարգավորվում են.
    - ֆուտբոլիստի կարգավիճակը,
    - ֆուտբոլիստի՝ Կազմակերպված ֆուտբոլին մասնակցելու կանոնները,
    - ֆուտբոլիստի՝ ակումբից ակումբ տեղափոխության կանոնները,
    - ֆուտբոլիստի (ֆուտբոլիստին ներկայացնող անձանց) և ակումբների միջև ծագած վեճերը,
    - Ակումբների կողմից ֆուտբոլիստի ազատ արձակումն ազգային հավաքական թիմերում հանդես գալու համար (հավելված 1):
2. Սույն կանոնակարգը նախատեսում է նաև երիտասարդ խաղացողների մարզումների և ուսուցման ոլորտներում ներդրումներ կատարող Ակումբների խրախուսման համակարգ:

## Գլուխ II
## ԽԱՂԱՑՈՂՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

**Հոդված 2. Խաղացողների կարգավիճակը**

1. Կազմակերպված Ֆուտբոլին մասնակցող խաղացողները կարող են ունենալ սիրողական կամ պրոֆեսիոնալ կարգավիճակ:
2. Պրոֆեսիոնալն այն խաղացողն է, ով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ունի կնքված պայմանագիր որևէ Ակումբի հետ և վարձատրվում է ավելին, քան ֆուտբոլային գործունեության կապակցությամբ իր կողմից կատարվող փաստացի ծախսերն են: Մյուս բոլոր խաղացողները համարվում են սիրողական կարգավիճակ ունեցող (ոչ պրոֆեսիոնալ):

**Հոդված 3. Սիրողական կարգավիճակի վերականգնումը**

1. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը կարող է վերագրանցվել որպես սիրողական՝ անցկացրած վերջին Պաշտոնական խաղից առնվազն 30 օր հետո:

2. Ֆուտբոլիստի Սիրողական կարգավիճակի վերականգնման դեպքում որևէ փոխհատուցում չի նախատեսվում: Եթե խաղացողի սիրողական կարգավիճակը վերականգնելուց հետո 30 ամսվա ընթացքում նա վերագրանցվում է որպես պրոֆեսիոնալ, ապա նոր Ակումբը պետք է Մարզումային փոխհատուցում վճարի՝ համաձայն հոդված 21-ի:

**<u>Հոդված 4.</u> Գրանցման պահպանումը գործունեության դադարեցումից հետո**

1. Պրոֆեսիոնալ կամ սիրողական կարգավիճակ ունեցող խաղացողները, ովքեր դադարեցնում են իրենց գործունեությունը, մնում են գրանցված ՀՖՖ-ում՝ նրանց անցկացրած վերջին Պաշտոնական խաղից հետո 30 ամիսների ընթացքում:
2. Վերոնշյալ ժամանակահատվածը սկսվում է այն օրվանից, երբ խաղացողն Ակումբի թիմի կազմում վերջին անգամ մասնակցում է Պաշտոնական խաղին:

## Գլուխ III
## ԽԱՂԱՑՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

**<u>Հոդված 5.</u> Գրանցումը**

1. Խաղացողը պետք է Ակումբի կողմից գրանցվի ՀՖՖ-ում: Միայն գրանցված խաղացողն իրավունք ունի մասնակցելու Կազմակերպված ֆուտբոլին: Գրանցվելով՝ խաղացողը պարտավորվում է ենթարկվել ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի հիմնարար դրույթների պահանջներին:
2. Նույն խաղացողը տվյալ ժամանակահատվածում կարող է գրանցված լինել միայն մեկ Ակումբում:
3. Խաղացողները մեկ խաղաշրջանի ընթացքում կարող են գրանցված լինել առավելագույնը երեք Ակումբներում: Այս ընթացքում տվյալ խաղացողն իրավունք ունի մասնակցելու միայն երկու Ակումբների Պաշտոնական խաղերին: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ խաղացողը «համընկնող մրցաշրջաններ» (այսինքն՝ երբ մրցաշրջանը սկսվում է ոչ թե ձմռանը/գարնանը, այլ ամռանը/աշնանը) ունեցող ասոցիացիաների մի ակումբից մյուսը տեղափոխվելիս՝ մրցաշրջանի ընթացքում պաշտոնական խաղերում հանդես է գալիս երրորդ ակումբի անունից և ամբողջությամբ կատարել է իր պայմանագրային պարտավորությունները նախկին ակումբների

նկատմամբ: Նմանապես, գրանցման ժամանակահատվածներին (տե՛ս հոդված 6), ինչպես նաև պայմանագրի կնքման նվազագույն ժամկետին (տե՛ս հոդված 14, կետ 2) վերաբերող դրույթները ևս պետք է հարգվեն:

4. Բոլոր դեպքերում պատշաճ ուշադրություն պետք է դարձվի մրցաշարի սպորտային միասնությանը: Մասնավորապես, կախված կոնկրետ անդամ ասոցիացիաների ներքին մրցաշարերի ուրույն կանոնակարգերից՝ պաշտոնական խաղերի ժամանակ խաղացողը չպետք է հանդես գա ավելի քան երկու ակումբի անունից, որոնք միևնույն մրցաշրջանի ժամանակ հանդես են գալիս նույն ազգային առաջնությունում կամ գավաթում:

## Հոդված 6. Գրանցման ժամանակահատվածները

1. Խաղացողների գրանցման համար սահմանվել են հետևյալ ժամանակահատվածները՝ փետրվարի 1-28-ը և հունիսի 1-ից մինչև օգոստոսի 23-ը:
2. Գրանցման ժամանակահատվածները պետք է մուտքագրվեն ՏՀՀ ուժի մեջ մտնելուց առնվազն 12 ամիս առաջ: Եթե ասոցիացիան ժամանակին ՖԻՖԱ-ին չի հաղորդում իր գրանցման ժամանակահատվածները, ապա ՖԻՖԱ-ն ինքն է որոշում դրանք:
3. Խաղացողները կարող են գրանցվել ՀՖՖ-ի սահմանած Գրանցման ժամանակահատվածներից յուրաքանչյուրում: Պրոֆեսիոնալ խաղացողը, որի պայմանագրի ավարտը համընկնում է Գրանցման ժամանակահատվածի ավարտի հետ, բացառության կարգով կարող է վերագրանցվել, եթե այն թելադրված է մարզական հանգամանքներով, և եթե Ակումբի կողմից դիմումը ներկայացվել է Գրանցման ժամանակահատվածում:
4. Սիրողականի կարգավիճակ ունեցող ֆուտբոլիստների գրանցումը կատարվում է առանց ժամկետային սահմանափակումների:
5. 4-րդ կարգի Ակումբից սիրողական կարգավիճակ ունեցող ֆուտբոլիստի՝ առանց կարգավիճակը փոխելու ավելի բարձր կարգի ակումբ տեղափոխության դեպքում, նրա վերագրանցումը նոր Ակումբում թույլատրվում է նախկին Ակումբում գրանցված օրվանից վեց ամիս հետո:

## Հոդված 7. Ֆուտբոլիստի անձնագիրը

1. 12 տարին լրացած յուրաքանչյուր խաղացող պետք է ունենա Ֆուտբոլիստի անձնագիր, որում նշվում են բոլոր այն Ակումբները, որտեղ նա գրանցված է եղել իբրև խաղացող: Եթե խաղացողի ծննդյան օրը համընկնում է Մրցաշրջանների միջև ընկած ժամանակահատ-

վածի հետ, ապա Անձնագրի մեջ պետք է նշվի այն Ակումբը, որտեղ նա գրանցված է եղել իր ծննդյան օրվան հաջորդող Մրցաշրջանում:

2. Սկսնակ ֆուտբոլիստին Ակումբը պարտավոր է գրանցել ՀՖՖ-ում և ստանալ համապատասխան Ֆուտբոլիստի անձնագիր:
3. ՀՖՖ-ն վարում է ֆուտբոլիստի էլեկտրոնային անձնագիրը, իսկ անձնագրի բնօրինակը պահվում է գրանցող Ակումբում: Ֆուտբոլիստի 15 տարին լրանալուն պես, ինչպես նաև ֆուտբոլիստին առաջին անգամ որպես պրոֆեսիոնալ գրանցելիս` ֆուտբոլիստի անձնագիրը ենթակա է փոփոխման:
4. Միջազգային տրանսֆերի դեպքում Ֆուտբոլիստի անձնագրի ստացումը (ուղարկումը) ապահովում է ՀՖՖ-ն:
5. Խաղացողի յուրաքանչյուր տեղափոխության ժամանակ Ֆուտբոլիստի անձնագիրը փոխանցվում է նախկին Ակումբից նոր Ակումբ: Ակումբը պատասխանատու է անձնագրի պահպանման համար: Անձնագրի կորստի դեպքում ՀՖՖ-ն կարող է տրամադրել կրկնօրինակը` Ակումբի կողմից համապատասխան տուգանք վճարելուց հետո:
6. Եթե սույն կանոնակարգով սահմանված դեպքերում նախկին ակումբը հրաժարվում է ֆուտբոլիստին տրամադրել կամ նոր ակումբին փոխանցել ֆուտբոլիստի անձնագիրը, ապա ՀՖՖ-ն կարող է նոր ակումբին տրամադրել ֆուտբոլիստի անձնագրի կրկնօրինակը:

**Հոդված 8. Գրանցման դիմումը**

1. Խաղացողին գրանցելու համար Ակումբը ՀՖՖ պետք է ներկայացնի.
   - սահմանված ձևի դիմում (հավելված 6),
   - Ֆուտբոլիստի անձնագիրը (բացառությամբ 1-ին գրանցման),
   - գունավոր լուսանկար (4,5x3,5),
   - ֆուտբոլիստի քաղաքացիական անձնագիրը կամ բացակայության դեպքում անձը հաստատող այլ փաստաթուղթ,
   - պայմանագրի բնօրինակը (ներկայացվում է Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ գրանցելու դեպքում):
2. 16 տարին չլրացած ֆուտբոլիստների համար քաղաքացիական անձնագրի բացակայության դեպքում ներկայացվում են ծննդյան վկայական և ուսումնական հաստատությունից տեղեկանք` աշակերտի լուսանկարով (գունավոր), նաև պետք է նշված լինեն ազգանունը, անունը, հայրանունը: Տեղեկանքը ստորագրվում է ուսումնական հաստատության տնօրենի կողմից և կնքվում (կնիքը պետք է մասամբ ներառի աշակերտի լուսանկարը):

**<u>Հոդված 9.</u> Միջազգային տրանսֆեր**

1. Միջազգային տրանսֆերի դեպքում խաղացողները գրանցվում են ՀՖՖ-ում ՖԻՖԱ-ի «Խաղացողների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի» և սույն կանոնակարգի դրույթներին համապատասխան:

**<u>Հոդված 10.</u> Միջազգային տրանսֆերային սերտիֆիկատ (ՄՏՍ)**

1. Ցանկացած ֆուտբոլիստ, ով գրանցված է տվյալ ասոցիացիայում, իրավունք չունի գրանցվել նոր ասոցիացիայում քանի դեռ վերջինս նախկին ասոցիացիայից չի ստացել միջազգային տրանսֆերային սերտիֆիկատը (ՄՏՍ): ՄՏՍ-ը տրամադրվում է անվճար, առանց որևէ պայմանի և ժամանակային սահմանափակման: Վերոնշյալին հակասող բոլոր դրույթները համարվում են անվավեր: ՄՏՍ տրամադրող ասոցիացիան ՄՏՍ-ի պատճենը ուղարկում է նաև ՖԻՖԱ: ՄՏՍ-ի տրամադրման վարչական գործընթացը մանրամասն նկարագրված է սույն կանոնակարգի 3-րդ հավելվածի I գլխի 8-րդ հոդվածում և 3-րդ հավելվածի II գլխում:
2. Ֆուտբոլիստին փորձնական խաղերում ներգրավելու նպատակով ՄՏՍ պահանջելն արգելվում է:
3. Նոր ասոցիացիան ՄՏՍ-ը ստանալուց հետո գրավոր տեղեկացնում է 12-23 տարեկան հասակում ֆուտբոլիստին մարզած և կրթած ակումբի(ների) ասոցիացիային(ներին) (տեԲս ՖԻՖԱ-ի ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի 7-րդ հոդվածը - ֆուտբոլիստի անձնագիր) այն մասին, որ որպես պրոֆեսիոնալ պատրաստվում է գրանցել ֆուտբոլիստին:
4. Մինչև 12 տարեկան խաղացողների համար ՄՏՍ չի պահանջվում:

**<u>Հոդված 11.</u> Ներքին տեղափոխություն**

1. Ներքին տեղափոխության դեպքում խաղացողները գրանցվում են ՀՖՖ-ում ՀՀ օրենսդրության և սույն կանոնակարգի դրույթներին համապատասխան:

**<u>Հոդված 12.</u> Խաղացողների վարձակալումը**

1. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը կարող է վարձակալվել մեկ այլ Ակումբի կողմից իր և Ակումբների միջև կնքված գրավոր համաձայնագրի հիման վրա: Յուրաքանչյուր այսպիսի վարձակալում կարգավորվում է խաղացողների տեղափոխության ժամանակ կիրառվող նույն կանոն-ներով՝ ներառյալ Մարզումային փոխհատուցման և Համերաշխության մեխանիզմին վերաբերող դրույթները:

2. Վարձակալման նվազագույն ժամկետը պետք է լինի գրանցման երկու ժամանակահատվածների միջև ընկած ժամանակահատվածը:
3. Խաղացողին վարձակալման հիմունքներով ընդունած Ակումբը իրավասու չէ նրան տեղափոխելու որևէ երրորդ Ակումբ` առանց խաղացողի և նրան վարձակալության տրամադրող Ակումբի գրավոր համաձայնության:

## Գլուխ IV
## ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԻ ԵՎ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ՄԻՋԵՎ

**<u>Հոդված 13.</u> Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի և Ակումբի հարաբերությունները**

1. Պրոֆեսիոնալ Ֆուտբոլիստի և Ակումբի միջև հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ, ՖԻՖԱ, ՈՒԵՖԱ, ՀՖՖ կանոնակարգող փաստաթղթերով և սույն կանոնակարգով:
2. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի և Ակումբի իրավունքներն ու պարտականություններն արտացոլվում են սահմանված կարգով կնքված աշխատանքային պայմանագրում:
3. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը իրավունք չունի նույն ժամանակահատվածի համար մեկից ավելի աշխատանքային պայմանագրեր կնքելու (բացառությամբ վարձակալության դեպքի):
4. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի և Ակումբի միջև ֆինանսական և/կամ այլ կոմերցիոն գաղտնիք պարունակող հարաբերությունները կարող են արտացոլվել պայմանագրին կից կնքվող հավելվածում(ներում): Հավելվածի(ների) առկայության մասին պետք է նշված լինի աշխատանքային պայմանագրի հիմնական տեքստում:
5. Աշխատանքային պայմանագրին կից կնքվող հավելվածի(ների) գրանցումը ՀՖՖ-ում պարտադիր չէ, սակայն համապատասխան վեճերի առկայության դեպքում` ՀՖՖ-ի Վեճերի Լուծման Պալատի պահանջով ենթակա է պարտադիր ներկայացման:
6. Աշխատանքային պայմանագիրը, կից հավելվածները, փոփոխություններն ու լրացումները և լրացուցիչ համաձայնությունները կազմվում են գրավոր, երեք օրինակից և կողմերի կողմից ստորագրվում են էջ առ էջ:

7. Պայմանագրի նվազագույն պահանջները, ինչպես նաև տիպային օրինակը ներկայացված են հավելված 2-ում:

**<u>Հոդված 14.</u> Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի և Ակումբի միջև կնքվող պայմանագրի հատուկ պայմաններ**

1. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի և Ակումբի միջև կնքվող պայմանագրում պետք է նշվեն նաև այն անձանց տվյալները, ովքեր ներգրավված են եղել բանակցություններում կամ պայմանագրի կնքման գործընթացում (խաղացողի օրինական ներկայացուցիչ, խաղացողի գործակալ, թարգմանիչ և այլն ):
2. Պայմանագրի նվազագույն տևողությունը կարող է լինել պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից մինչև տվյալ Մրցաշրջանի ավարտը, իսկ առավելագույն տևողությունը` 5 տարի:
3. Տասնութ տարին չլրացած ֆուտբոլիստը չի կարող կնքել պայմանագիր երեք տարուց ավել ժամկետով:
4. Աշխատանքային պայմանագիր կարող է ստորագրել միայն 16 տարին լրացած ֆուտբոլիստը: 14-16 տարեկան ֆուտբոլիստի հետ պայմանագիր կարող է կնքվել ծնողներից մեկի, որդեգրողի կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ: 14 տարին չլրացած ֆուտբոլիստի հետ աշխատանքային պայմանագիր կնքել նարգելվում է:
5. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի հետ պայմանագիր կնքել ցանկացող Ակումբը պետք է մինչև բանակցություններ սկսելը իր մտադրության մասին գրավոր տեղեկացնի Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի ներկա Ակումբին:
6. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստն իրավասու է կնքելու պայմանագիր որևէ այլ Ակումբի հետ, եթե իր Ակումբի հետ գործող պայմանագիրն ավարտվել է կամ կավարտվի վեց ամսից ոչ ուշ: Այս դրույթի յուրաքանչյուր խախտում ենթակա է համապատասխան պատժամիջոցների:
7. Պայմանագրի գործողությունը չի կարող կախված լինել խաղացողի բժշկական հետազոտության արդյունքներից և/կամ աշխատանքի թույլտվության հանգամանքից:
8. Եթե խաղացողը մարզումների, հավաքների, խաղերի կամ մրցուղևորության ժամանակ ստացած խեղման /վնասվածք/ հետևանքով կորցրել է աշխատունակությունը, ապա նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը չի կարող լուծվել ակումբի նախաձեռնությամբ` առանց ֆուտբոլիստի համաձայնության մինչև նրա աշխատունակության վերականգնումը կամ հաշմանդամության կարգի որոշումը:

**Հոդված 15. Պայմանագրի գրանցումը**

1. Ակումբի և ֆուտբոլիստի միջև կնքված պայմանագիրը, ինչպես նաև նրանում բոլոր փոփոխությունները և լրացումները ենթակա են գրանցման ՀՖՖ-ում 15-օրյա ժամկետում:
2. ՀՖՖ ներկայացվում են պայմանագրի բնօրինակները, որոնցից երկուսը համապատասխան գրանցում ստանալուց հետո վերադարձվում են Ակումբին:
3. Չգրանցված պայմանագրերը չեն կարող հիմք հանդիսանալ Ակումբի և Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի միջև պայմանագրային վեճերի քննարկման դեպքում:

**Հոդված 16. Պայմանագրի դադարեցումը հիմնավոր դրդապատճառներով**

1. Պայմանագիրը կարող է միակողմանի, առանց հետևանքների (փոխհատուցման վճարում կամ մարզական պատժամիջոցներ) դադարեցվել՝ միայն հիմնավոր դրդապատճառների առկայության դեպքում:

**Հոդված 17. Պայմանագրի դադարեցումը մարզական տեսանկյունից հիմնավոր դրդապատճառներով**

1. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը, որը Մրցաշրջանի ընթացքում մասնակցել է իր Ակումբի անցկացրած 10%-ից քիչ Պաշտոնական խաղերի, կարող է վաղաժամ, Մրցաշրջանի ավարտին, դադարեցնել պայմանագիրը մարզական դրդապատճառներով: Նման դեպքերում գնահատական տալիս հատուկ ուշադրություն է դարձվում ֆուտբոլիստին վերաբերող հանգամանքներին: Եթե պայմանագրի դադարեցումը հիմնավորված է մարզական տեսանկյունից, ապա մարզական պատժամիջոցներ չեն կիրառվում, սակայն պայմանագրում նշված փոխհատուցումը պետք է իրականացվի: Ըստ այդմ՝ Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը կարող է դադարեցնել պայմանագիրն իր Ակումբի մրցաշրջանի վերջին Պաշտոնական խաղից հետո 15-օրյա ժամկետում:

**Հոդված 18. Խաղաշրջանի ընթացքում պայմանագրի դադարեցման սահմանափակում**

1. Պայմանագիրը չի կարող միակողմանի դադարեցվել Մրցաշրջանի ընթացքում:

## <u>Հոդված 19.</u> Առանց հիմնավոր դրդապատճառի պայմանագրի դադարեցման արդյունքում ծագող հետևանքները

Առանց հիմնավոր դրդապատճառի պայմանագիրը միակողմանի դադարեցնելու դեպքում սահմանվում է հետևյալը.

1. Ամեն դեպքում պայմանագիրը դադարեցնող կողմը պետք է վճարի փոխհատուցում: Հաշվի առնելով Մարզումային փոխհատուցման վերաբերյալ 4-րդ հավելվածի դրույթները, ինչպես նաև այն, որ եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա խախտման դիմաց փոխհատուցումը պետք է հաշվարկել հավուր պատշաճի՝ հաշվի առնելով ՀՀ օրենսդրությունը, մարզական առանձնահատկությունները և ցանկացած այլ օբյեկտիվ չափանիշներ:Վերջիններս մասնավորապես ընդգրկում են.
    - առկա և/կամ նոր պայմանագրի համաձայն ֆուտբոլիստին հասանելիք վարձավճարները և այլ եկամուտներ,
    - մինչև պայմանագրի ավարտը մնացած ժամանակամիջոցը (առավելագույնը մինչև 5 տարի),
    - Նախկին Ակումբի կողմից վճարված գումարները և ծախսերը (ամորտիզացիոն նկատառումներով բաշխված պայմանագրի գործողության ողջ ժամկետի վրա);
    - պայմանագրի դադարեցումը տեղի է ունեցել Պաշտպանված ժամանակահատվածի ընթացքում:
2. Փոխհատուցման իրավունքը չի կարող փոխանցվել երրորդ կողմին: Եթե Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը պետք է փոխհատուցում վճարի, ապա տվյալ ֆուտբոլիստը և նրա նոր Ակումբը հավասարաչափ պատասխանատվություն են կրում այդ վճարումների համար: Գումարի չափը կարող է նախատեսվել պայմանագրով կամ համաձայնեցվել կողմերի միջև:
3. Պաշտպանված ժամանակահատվածում ֆուտբոլիստի կողմից պայմանագիրը միակողմանի դադարացնելու դեպքում փոխհատուցման պարտավորությունից բացի կարող են կիրառվել նաև մարզական պատժամիջոցներ: Նշված պատժամիջոցը զրկելու է խաղացողին պաշտոնական խաղերում հանդես գալու իրավունքից շուրջ չորս ամսով, իսկ ծայրահեղ դեպքերում՝ վեց ամսով: Սույն մարզական պատժամիջոցները ուժի մեջ են մտնում տվյալ որոշման մասին խաղացողի տեղեկացման պահից: Մարզական պատժամիջոցները կկասեցվեն մրցաշրջանի վերջին պաշտոնական խաղի և հաջորդ մրցաշրջանի առաջին պաշտոնական խաղի միջև ընկած ժամանակահատվածում՝ երկու դեպքում էլ ներառելով ակումբների ազգային գավաթներն ու միջազգային առաջնությունները: Կասեցված մարզական պատժամիջոցները

կվերսկսվեն, եթե խաղացողը հանդիսանում է այն ասոցիացիայի հավաքականի անդամ, որին իրավասու է ներկայացնել, և եթե տվյալ ասոցիացիան հաջորդ մրցաշրջանի վերջին և առաջին խաղերի միջև ընկած ժամանակահատվածում մասնակցում է միջազգային մրցաշարի եզրափակիչ փուլին: Առանց հիմնավոր կամ մարզական տեսանկյունից հիմնավոր դրդապատճառների Պաշտպանված ժամանակահատվածից դուրս պայմանագիրը միակողմանի դադարեցնելու դեպքում մարզական պատժամիջոցներ չեն կիրառվում: Այդ դեպքում պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ կողմը(երը) համապատասխան ծանուցում պետք է ներկայացնի(ներկայացնեն) ՀՖՖ՝ Մրցաշրջանի ավարտից հետո 15-օրյա ժամկետում: Պաշտպանված ժամանակահատվածը վերսկսվում է պայմանագրի նորացման դեպքում, եթե նախկին պայմանագրի ժամկետը երկարացվել է:

4. Պաշտպանված ժամանակահատվածում Ակումբի կողմից պայմանագիրը դադարեցնելու կամ դադարեցում հրահրելու մեջ մեղավոր ճանաչվելու դեպքում փոխհատուցում վճարելու պարտավորությունից բացի կիրառվում են նաև մարզական պատժամիջոցներ: Ենթադրվում է, որ առանց հիմնավոր դրդապատճառի պայմանագիրը դադարեցրած պրոֆեսիոնալի հետ նոր պայմանագիր ստորագրած Ակումբն է հրահրել նրան նման գործողությունների, եթե չի ապացուցվում հակառակը:
5. Յուրաքանչյուր անձի (Ակումբների պաշտոնյաների, խաղացողների գործակալների, խաղացողների) նկատմամբ կիրառվում են պատժամիջոցներ, եթե նա փորձում է իր գործողություններով պայմանագրի խզում հրահրել Ակումբի և պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի միջև՝ վերջինիս տեղափոխությունը հեշտացնելու նպատակով:
6. Ոչ մի ակումբ չպետք է կնքի այնպիսի պայմանագիր, որը լիազորություն կտա ցանկացած այլ կողմին կամ որևէ երրորդ կողմին ազդելու ակումբի անկախության, քաղաքականության և թիմերի մրցելույթների վրա՝ կապված աշխատանքային և տրանսֆերային հարցերի հետ:

## Գլուխ V
## ՄԱՐԶՈՒՄԱՅԻՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ

**Հոդված 20. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի Մարզումային փոխհատուցումը**

1. Մարզումային Փոխհատուցում պետք է վճարվի Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստին մարզած, կրթած Ակումբին(ներին)՝
   ա/ եթե խաղացողը ստորագրում է իր առաջին Պրոֆեսիոնալ պայմանագիրը;
   բ/ երբ Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը տեղափոխվում է մի Ակումբից մյուսը (պայմանագրի ընթացքում կամ ավարտից հետո) մինչև իր 23-րդ տարեդարձի Մրցաշրջանի ավարտը:
2. Մարզումային փոխհատուցում վճարելու պարտավորությունը ծագում է, եթե Պրոֆեսիոնալ Ֆուտբոլիստի տեղափոխությունը տեղի է ունենում նախքան նրա 23 տարին լրանալը մինչև Մրցաշրջանի ավարտը:
3. Մարզումային փոխհատուցմանը վերաբերող բոլոր դրույթները շարադրված են սույն Կանոնակարգի հավելված 4-ում:

**Հոդված 21. Սիրողական ֆուտբոլիստի Մարզումային փոխհատուցումը**

1. Մարզումային փոխհատուցում պետք է վճարվի 12 տարին լրացած Սիրողական ֆուտբոլիստի տեղափոխության ժամանակ, նրան մարզած, կրթած Ակումբին՝ համաձայն ՀՖՖ սահմանած ակումբների կարգերի և հաստատած դրույքաչափերի՝ հաշվի առնելով նախկին Ակումբի Սիրողական ֆուտբոլիստի ուսուցման և մարզման համար կատարած ներդրումների տարիների քանակը:
2. Մարզումային Փոխհատուցում չի վճարվում Սիրողական Ֆուտբոլիստի տեղափոխության դեպքում, եթե նա Ակումբից Ակումբ է տեղափոխվել իր 23 տարին լրանալու Մրցաշրջանի ավարտից հետո:
3. Սիրողական ֆուտբոլիստների Մարզումային փոխհատուցմանը վերաբերող բոլոր դրույթները շարադրված են սույն Կանոնակարգի հավելված 4-ում:

**Հոդված 22. Համերաշխության մեխանիզմը**

1. Պայմանագրի գործողության ընթացքում Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի տեղափոխության դեպքում նրան մարզած և կրթած ցանկացած Ակումբ

պետք է ստանա իր մասնաբաժինը այն գումարից, որը վճարվում է ֆուտբոլիստի նախկին Ակումբին (համերաշխության վճար):

2. Համերաշխության մեխանիզմին վերաբերող բոլոր դրույթները շարադրված են սույն Կանոնակարգի հավելված 5-ում:

## Գլուխ VI
## ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՊԱԼԱՏ

**Հոդված 23 Վեճերի լուծման կարգը**

Ֆուտբոլային սուբյեկտների միջև սույն կանոնակարգից բխող վեճերի կարգավորումը իրականացվում է Վեճերի Լուծման Պալատի կողմից ՀՖՖ կանոնադրության, սույն կանոնակարգի և ՎԼՊ կանոնակարգով սահմանված կարգով:

## Գլուխ VII
## ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**Հոդված 24. Կանոնակարգի՝ ուժի մեջ մտնելը**

1. Սույն Կանոնակարգը հաստատվել է Գործկոմի կողմից և ուժի մեջ է մտել 29.04.2012թ.:
2. Սույն կանոնակարգի՝ ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել 23.03.2007թ «Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության մասին կանոնակարգը» և հետագայում դրանում կատարված բոլոր փոփոխությունները:
3. Սույն Կանոնակարգով չնախատեսված դեպքերում, ինչպես նաև ֆորս-մաժորային իրավիճակներում որոշումը կայացվում է ՀՖՖ-ի Գործկոմի կողմից, որը վերջնական է:
4. Ցանկացած գործ, որ ՀՖՖ-ին ներկայացվել է նախքան սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելը, քննարկվում է ըստ նախկին կանոնակարգի:

**<u>Հոդված 25.</u> Պատասխանատվությունը կանոնակարգի դրույթները խախտելու համար**

1. Սույն Կանոնակարգի դրույթների խախտման, չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերում ֆուտբոլային սուբյեկտները ենթարկվում են կարգապահական պատժամիջոցների սույն կանոնակարգի հավելված 9-ի և/կամ ՀՖՖ գործող կանոնակարգերի դրույթներին համապատասխան:

# ՀԱՎԵԼՎԱԾ 1

## Ֆուտբոլիստների ազատ արձակումը ՀՀ Ազգային հավաքականներում հանդես գալու համար

**<u>Հոդված 1.</u> Սկզբունքներ**

1. ՀՖՖ կողմից հրավերքի առկայության դեպքում Ակումբները պարտավոր են տրամադրել իրենց մոտ գրանցված խաղացողներին ՀՀ ազգային հավաքականներում հանդես գալու համար: Նշված դրույթը սահմանափակող ցանկացած այլ համաձայնություն Ֆուտբոլիստի և Ակումբի միջև առոչինչ է:
2. Սույն հոդվածի կետ 1-ի պայմանների համաձայն, ֆուտբոլիստների ազատ արձակումը պարտադիր է «Միջազգային խաղերի հաստատված խաղացանկ»-ում նշված հանդիպումների համար, ինչպես նաև բոլոր այն հանդիպումների, որոնց մասնակցության համար ֆուտբոլիստներին ազատ արձակելու պարտավորությունը սահմանվել է ՖԻՖԱ-ի Գործադիր կոմիտեի հատուկ որոշմամբ:
3. Ֆուտբոլիստներին պետք է ազատ արձակել նաև հանդիպման նախապատրաստական շրջանի համար, որի ժամկետները սահմանվում են հետևյալ կերպ.
   - ա/ ընկերական խաղերի դեպքում` 48 ժամ,
   - բ/ միջազգային մրցաշարի ընտրական հանդիպման դեպքում` 4 օր (ներառյալ խաղի օրը): Նշված ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 5 օր, եթե խաղն անցկացվում է Եվրոպայի սահմաններից դուրս,
   - գ/ եթե միջազգային մրցաշարի ընտրական հանդիպումն անցկացվում է ընկերական հանդիպումների համար նախատեսված օրը` 48 ժամ,
   - դ/ միջազգային մրցաշարի եզրափակիչ մրցումների դեպքում` մրցաշարի առաջին հանդիպումից 14 օր առաջ:

Ամեն դեպքում, ֆուտբոլիստները պետք է միանան ՀՀ Ազգային հավաքականին խաղասկզբից նվազագույնը 48 ժամ առաջ:

4. Ակումբները և ՀՖՖ-ն կարող են համաձայնության գալ ֆուտբոլիստին ավելի երկար ժամկետով ազատ արձակելու վերաբերյալ:
5. ՀՀ երիտասարդական և պատանեկան հավաքականների ֆուտբոլիստները պետք է ազատ արձակվեն ակումբների կողմից` առանց սույն հոդվածի 3-րդ կետում նշված ժամկետային սահմանափակումների:

6. ՀՀ ակումբներում հանդես եկող այլ Ազգային հավաքականների անդամների ազատ արձակումն ու վերադարձը իրականացվում է՝ համաձայն ՖԻՖԱ-ի «Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի»:

**Հոդված 2.Ֆինանսական դրույթներ և ապահովագրություն**

1. Իր ֆուտբոլիստին ազատ արձակած Ակումբը, համաձայն սույն հավելվածի կետերի, իրավունք չունի ստանալու ֆինանսական որևէ փոխհատուցում:
2. ՀՖՖ-ն հոգում է ֆուտբոլիստների՝ ՀՀ Ազգային հավաքականներ ժամանման հետ կապված ծախսերը:
3. Ակումբը, որտեղ գրանցված է հրավիրված ֆուտբոլիստը, պատասխանատվություն է կրում ազատ արձակման ամբողջ ժամանակահատվածում նրա հիվանդության և դժբախտ պատահարների, ինչպես նաև այն միջազգային խաղի (խաղերի) ընթացքում ստացած վնասվածքների ապահովագրման համար, որին հրավիրվել է ֆուտբոլիստը:

**Հոդված 3.Ֆուտբոլիստների հրավերքը**

1. Ակումբում գրանցված ֆուտբոլիստը պարտավոր է ընդունել ՀՖՖ հրավերքը՝ Ազգային հավաքականներից որևէ մեկում հանդես գալու համար:
2. ՀՖՖ-ն պարտավոր է գրավոր իրազեկել Ակումբին հրավիրվող ֆուտբոլիստի մասին այն խաղից առնվազն 7 օր առաջ, որին տվյալ խաղացողը հրավիրվում է մասնակցելու: Ակումբը պարտավոր է հաստատել ֆուտբոլիստի ազատ արձակումը հաջորդող 2 օրվա ընթացքում:

**Հոդված 4. Վնասվածք ստացած ֆուտբոլիստներ**

1. Ֆուտբոլիստը, ով վատառողջության կամ վնասվածք ստանալու պատճառով չի կարող ընդունել ՀՖՖ հրավերքը, վերջինիս պահանջի դեպքում պետք է անցնի բժշկական հետազոտություն: Բժշկի ընտրությունը կատարում է ՀՖՖ-ն: Ֆուտբոլիստի ցանկության դեպքում այդ բժշկական հետազոտությունը կանցկացվի այն վայրում, որտեղ նա գրանցված է:

**<u>Յոդված 5.</u>Արգելք ֆուտբոլիստների մասնակցության վրա**

1. Քանի դեռ ձեռք չի բերվել ՀՖՖ համաձայնությունը, ֆուտբոլիստը, որը հրավիրվել է հանդես գալու Ազգային հավաքականներից որևէ մեկում, ոչ մի դեպքում չի կարող խաղալ իրեն գրանցած Ակումբի կազմում այն ժամանակահատվածում, որում նա ազատ է արձակվել կամ պետք է ազատ արձակվեր` համաձայն սույն հավելվածի կետերի: Ավելին, Ակումբի կազմում խաղալու այս սահմանափակումը կարող է երկարաձգվել 5 օրով, եթե ֆուտբոլիստը որևէ պատճառով չի ցանկանում կամ չի կարող ընդունել հրավերքը:

**<u>Յոդված 6.</u> Կարգապահական պատժամիջոցներ**

1. Եթե Ակումբը մերժում է ազատ արձակել ֆուտբոլիստին կամ անուշադրության է մատնում սույն հավելվածում նշված պայմանները, ՖԻՖԱ-ի Ֆուտբոլիստների կարգավիճակային կոմիտեն կարող է պահանջել տվյալ Ակումբի ազգային ասոցիացիայից պարտություն գրանցել տվյալ Ակումբին խաղի(երի) համար, որին(որոնց) մասնակցել է ֆուտբոլիստը: Գավաթային համակարգով անցկացված հանդիպման դեպքում, անկախ արդյունքից, կգրանցվի մրցակցի օգտին:
2. Եթե ասոցիացիայի հրավերից հետո ֆուտբոլիստը մեկ անգամից ավել ուշանում է ներկայանալու իր պարտականությունների կատարման վայր, ապա ՖԻՖԱ-ի Ֆուտբոլիստների կարգավիճակային կոմիտեն խաղացողի Ակումբի խնդրանքով կարող է ֆուտբոլիստի և/կամ ասոցիացիայի նկատմամբ կիրառել լրացուցիչ կարգապահական պատժամիջոցներ:

# ՀԱՎԵԼՎԱԾ 2

## Աշխատանքային պայմանագրի նվազագույն պահանջները

## Պայմանագիրը և կողմերը

1. Պայմանագիրը պետք է կնքվի գրավոր և պատշաճ ստորագրված լինի երկու կողմերի կողմից: Անչափահաս ֆուտբոլիստի հետ պայմանագիր կնքելիս, այն պետք է նաև ստորագրվի նրա օրինական ներկայացուցչի կողմից:
2. Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:
3. Պայմանագրում նշվում են խաղացողի անունը, ազգանունը, ծննդյան թիվը, քաղաքացիությունը (ները), ինչպես նաև բնակության վայրի ամբողջական հասցեն: Եթե ֆուտբոլիստը անչափահաս է, պայմանագրում պետք է համապատասխանաբար նշվեն նաև նրա օրինական ներկայացուցչի տվյալները:
4. Պայմանագրում նշվում է Ակումբի ամբողջական իրավական անվանումը (ներառյալ գրանցման համարը) և հասցեն, ինչպես նաև Ակումբը ներկայացնող անձի անունը, ազգանունը, հասցեն: Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի հետ պայմանագիր կարող է կնքել միայն ֆուտբոլային ակումբը կամ այն ներկայացնող իրավաբանական անձանց միությունը: Համաձայն ակումբների արտոնագրման ազգային կանոնակարգի/ձեռնարկի՝ նման միությունը սահմանվում է որպես արտոնագրման թեկնածու: Այն պետք է հանդիսանա ազգային ասոցիացիայի և/կամ պրոֆեսիոնալ լիգայի ուղղակի կամ անուղղակի անդամ և գրանցված լինի: Այլ իրավաբանական անձանց միություն չի կարող կնքել նման պայմանագիր ֆուտբոլիստի հետ առանց կոմպետենտ ազգային ֆուտբոլային մարմնի և/կամ ՖԻՖԱ-ի գրավոր համաձայնության:
5. Պայմանագրում պետք է հստակ սահմանվեն պայմանագրի ուժի մեջ մտնելու սկիզբը (օր/ ամիս/տարի) և ավարտը: Ցանկացած վաղաժամկետ դադարեցում պետք է լինի օրենքով նախատեսված:
6. Պայմանագրում պետք է նշվեն նաև այն անձանց տվյալները, ովքեր ներգրավված են եղել բանակցություններում կամ պայմանագրի կնքման գործընթացին (խաղացողի օրինական ներկայացուցիչ, խաղացողի գործակալ, թարգմանիչ և այլն): Առանց միջնորդի պայամանագիր կնքելու հանգամանքը ևս պետք է ամրագրվի պայմանագրում:

7. Աշխատանքային պայմանագրում պետք է ներառվեն կողմերի իրավունքները և պարտականությունները:
8. Պայմագրի ցանկացած փոփոխություն պետք է կատարվի երկկողմանի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով և որպես անբաժանելի մաս՝ կցվի հիմնական պայմանգրին:

## Ակումբի պարտականությունները

1. Պայմանագիրը պետք է սահմանի ակումբի ֆինանսական պարտականություններն ամբողջ ծավալով : Մասնավորապես ՝
   - աշխատավարձ,
   - ֆինանսական այլ եկամուտներ (բոնուսներ, պարգևատրումներ և այլն),
   - ոչ ֆինանսական եկամուտներ (մեքենա, բնակարան և այլն),
   - հիվանդության ու դժբախտ պատահարների դեպքում խաղացողի ապահովագրություն (օրենքով պարտադիր) և վերջինիս անգործունակության դեպքում աշխատավարձի վճարում,
   - խաղացողի կողմից արված ծախսերի փոխհատուցում:
2. Պայմանագիրը պետք է սահմանի գումարի վճարման ժամկետը (մինչև յուրաքանչյուր ամսվա վերջ) և վճարման ձևը (կանխիկ, փոխանցումով և այլն): Պայմանագիրը կարող է կանոնակարգել նաև ֆինանսական դրույթների փոփոխության հնարավորություն՝ կախված Գործատուի եկամտի փոփոխություններից ( առաջխաղացում, ռեգրես ):
3. Պայմանագիրը պետք է երաշխավորի երիտասարդ խաղացողների ոչ ֆուտբոլային (մարզական) կրթությունը (պարտադիր միջնակարգ դպրոց) անարգել շարունակելու իրավունքը:
4. Պայմանագիրը պետք է սահմանի խաղացողի տարեկան արձակուրդի իրավունքը, (28 օրացուցային օր): Արձակուրդի ժամկետը պետք է համաձայնեցվի ակումբի հետ նախօրոք և լինի ակումբի ֆուտբոլային կանոնավոր մրցաշրջանից հետո:
5. Պայմանագրիրը պետք է ներառի առողջապահության և անվտանգության ասպարեզում ակումբի կողմից վարվող քաղաքականության վերաբերյալ դրույթներ՝ հիվանդության ու դժբախտ պատահարների դեպքում խաղացողի՝ ՀՀ օրենքով սահմանված կարգով ապահովագրման և կանոնավոր բժշկական զննման մասին:

6. Պայմանագիրը կանոնակարգում է նաև վնասվածքի մասին համապատասխան գրառումների պահպանումը (ներառյալ ազգային թիմում ստացված վնասվածքների)՝ միաժամանակ պահպանելով գաղտնիություն: Եթե օրենքը այլ բան չի նախատեսում, ապա, որպես կանոն, վնասվածքի մասին գրառումները պահվում են թիմի պատասխանատու բժշկի մոտ:
7. Պայմանագիրը պետք է սահմանի դրույթ, ըստ որի Ակումբը պարտավորվում է ղեկավարվել ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի, ՀՖՖ-ի կանոնադրություններով և կանոնակարգերով:

## Խաղացողի պարտականությունները

1. Պայմանագիրը պետք է սահմանի խաղացողի հետևյալ պարտականությունները՝
    - մասնակցել հանդիպումներին ունակությունների առավելագույն դրսևորմամբ,
    - մասնակցել մարզումներին և խաղի նախապատրաստական աշխատանքներին՝ համաձայն մարզչի հարահանգների,
    - վարել առողջ ապրելակերպ, պահպանել ֆիզիկական պատրաստվածության բարձր ցուցանիշներ,
    - հետևել ակումբի ղեկավարների հրահանգներին (ողջամիտ),
    - հաճախել ակումբին վերաբերող բոլոր միջոցառումներին (լինի մարզական, թե առևտրային),
    - ենթարկվել ակումբի ներքին կանոնակարգերին,
    - դրսևորել մարզական պատշաճ վարքագիծ հանդիպումներին և ուսումնամարզական հավաքներին ներգրավված անձանց նկատմամբ, սովորել և կիրառել խաղի կանոնները և ենթարկվել խաղի պաշտոնյաների որոշումներին,
    - զերծ մնալ ֆուտբոլային այլ միջոցառումներին մասնակցելուց, որոնք իրական վտանգ են ներկայացնում և անցկացվում են ակումբի անվտանգության համակարգից դուրս,
    - Ուշադիր լինել ակումբին պատկանող գույքի նկատմամբ և վերադարձնել այն պայմանագրի ավարտից հետո,
    - հիվանդության և դժբախտ պատահարի դեպքում անմիջապես տեղեկացնել ակումբին և չընդունել որևէ այլ բժշկական միջամտություն՝ առանց ակումբի բժշկին տեղեկացնելու ( բացառությամբ անհետաձգելի իրավիճակների),

- ներկայացնել անաշխատունակության վերաբերյալ համապատասխան բժշկական փաստաթուղթ,
- ակումբի բժշկի պահանջով կանոնավոր բժշկական զննման ենթարկվել և ստանալ անհրաժեշտ բուժումներ,
- ենթարկվել ազգային ասոցիացիայի, լիգայի, խաղացողների միության և ակումբի ցանկացած խտրականության դեմ վարվող քաղաքականության պայմաններին,
- չկատարել որևէ գործողություն, որը կարող է խոչընդոտել կամ խափանել ակումբի գործունեության պատշաճ ընթացքը, արատավորել ակումբի բարի համբավը, (հարցազրույցներ և այլն),
- չկատարել խաղադրույքներ և չծավալել նմանատիպ այլ գործունեություն ֆուտբոլային ասպարեզում:

2. Պայմանագիրը պետք է սահմանի դրույթ, ըստ որի խաղացողը պարտավորվում է ղեկավարվել ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի, ՀՖՖ կանոնադրություններով և կանոնակարգերով:
3. Խաղացողի և ակումբի բժշկի տարակարծության դեպքում խաղացողն իրավունք ունի ստանալու այլընտրանքային մասնագետի եզրակացություն: Տարբեր կարծիքների դեպքում երկու կողմերը համաձայնվում են ընդունել երրորդ՝ անկախ կարծիքը, որը դառնում է պարտադիր:

## Հարկային պարտավորություններ

Պայմանագրում պետք է նախատեսված լինեն դրույթներ, որոնք վերաբերում են պայմանագրից բխող հարկային պարտավորությունները կատարելուն:

## Իմիջային իրավունք

Խաղացողը և Ակումբը պետք է պայմանավորվեն խաղացողի իմիջային իրավունքների օգտագործման վերաբերյալ:

Խաղացողը, որպես կանոն, կարող է օգտագործել իր իմիջային իրավունքները (եթե կոնֆլիկտ չկա ակումբի հովանավորների/գործընկերների հետ), մինչդեռ ակումբը կարող է օգտագործել խաղացողի իմիջային իրավունքները որպես ամբողջ թիմի մի մաս:

## Վարձակալություն

Պայմանագիրը պետք է նախատեսի անհրաժեշտության դեպքում խաղացողին այլ ակումբ վարձակալությամբ տեղափոխելու պայմանների վերաբերյալ դրույթներ ՝ համաձայն գործող կանոնակարգերի:

## Հակախթանիչներ

Պայմանագիրը պետք է Խաղացողի և Ակումբի պարտականությունների մեջ ներառի հակախթանիչային կանոնակարգերին անխտիր ենթարկվելու վերաբերյալ դրույթներ:

## Պայմանագրի լուծումը

1. Պայմանագիրը պետք է սահմանի դրույթ, որ եթե խաղացողը կորցրել է աշխատունակությունը աշխատանքային խեղման /վնասվածք/ հետևանքով, որ ստացել է մարզումների, հավաքների, խաղերի կամ մրցուղևորության ժամանակ, ապա նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրն առանց ֆուտբոլիստի համաձայնության չի կարող լուծվել ակումբի նախաձեռնությամբ մինչև ֆուտբոլիստի աշխատունակության վերականգնումը կամ հաշմանդամության կարգի որոշումը:
2. Պայմանգիրը պետք է ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի և ՀՖՖ-ի համապատասխան կանոնադրությունների և կանոնակարգերի համաձայն պայմաններ նախատեսի պայմանգրի վաղաժամկետ լուծման վերաբերյալ:

## Կոլեկտիվ պայմանագիր

1. Ակումբն ու խաղացողը պարտավոր են կատարելու նախապես համաձայնեցված և ամբողջությամբ ստորագրված կոլեկտիվ պայմանագրի դրույթները:

## Եզրափակիչ դրույթներ

Պայմանագրի եզրափակիչ դրույթներում պետք է նշվեն՝

- կողմերի միջև առաջացած վեճերի կարգավորման եղանակները՝ ՀՀ գործող օրենսդրությանը, ՈՒԵՖԱ-ի , ՖԻՖԱ-ի, և ՀՖՖ գործող կանոնադրություններին և կանոնակարգերին համապատասխան,
- նշում այն մասին, թե պայմանագրի որ տարբերակին է տրվում առաջնություն, եթե պայմանագիրը թարգմանվել է մեկից ավելի լեզուներով,
- պայմանագրի կոնֆիդենցիալությունը, քանի դեռ ազգային օրենսդրությամբ կամ ֆուտբոլային կանոնակարգերով չի նախատեսվում դրույթների հրապարակումը,
- պայմանագրի օրինակների թիվը, ում են դրանք տրամադրվում,
- պայմանագրին կցված հավելվածների թիվը / առկայության դեպքում/,
- նշում այն մասին, որ պայմանագրի որևէ դրույթի անվավերությունը չի կարող անդրադառնալ մյուս դրույթների վավերությանը,
- պայմանագրի դրույթները կարող են փոփոխվել միայն կողմերի գրավոր համաձայնությամբ:

*տիպային օրինակ*

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան

,,__,, . ,,______,,.200__թ.

……………………………………….. (այսուհետ **«Ակումբ»**), ի դեմս գործադիր տնօրեն ……………………………………, որը գործում է **«Ակումբ»-ի** կանոնադրության հիման վրա՝ մի կողմից, և ՀՀ քաղաքացի ………………………………………………… (այսուհետ **«Ֆուտբոլիստ»)՝** մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

*Պայմանագրում պետք է նշվեն նաև այն անձանց տվյալները, ովքեր ներգրավված են եղել բանակցություններում կամ պայմանագրի կնքման գործընթացին (խաղացողի օրինական ներկայացուցիչ, խաղացողի գործակալ, թարգմանիչ և այլն): Առանց միջնորդի պայմանագիր կնքելու հանգամանքը ևս պետք է ամրագրվի պայմանագրում:*

## 1. Հիմնական դրույթներ

Սույն պայմանագրով **«Ֆուտբոլիստ»-ը** ընդունվում է Ակումբում աշխատանքի, պրոֆեսիոնալ կարգավիճակով:

**«Ֆուտբոլիստ»-ի և «Ակումբ»-ի** միջև փոխհարաբերությունները կարգավորվում են սույն պայմանագրով, ՀՀ գործող օրենսդրությամբ, «Ակումբ»-ի, ՀՖՖ-ի, ՈՒԵՖԱ-ի, ՖԻՖԱ-ի կանոնադրություններով և կանոնակարգերով: **«Ակումբ»-ը,** ուր աշխատում է ֆուտբոլիստը, հանդիսանում է նրա հիմնական աշխատավայրը: **«Ֆուտբոլիստ»-ի** աշխատաժամանակի տևողությունը չնորմավորված է: Աշխատանքը սկսելու տարին, ամիսը, ամսաթիվը՝ ____________________

## 2. «Ֆուտբոլիստ»-ի իրավունքները և պարտականությունները

**2.1. «Ֆուտբոլիստ»-ը** պարտավորվում է՝

2.1.1 Ընդունել վերոգրյալ կանոնադրություններն ու կանոնակարգերը և իր աշխատանքային գործունեության ընթացքում ղեկավարվել դրանցով:

2.1.2 Ենթարկվել ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի ղեկավար մարմինների համապատասխան կանոնադրություններով և կանոնակարգերով` իրենց լիազորությունների շրջանակներում ընդունված որոշումներին, ինչպես նաև ենթարկվել ակումբի կանոններին (ներառյալ անհրաժեշտության դեպքում Ակումբի Կարգապահական կանոնակարգին, որը մինչև պայմանագրի կնքումը ամբողջությամբ պետք է ներկայացվի ֆուտբոլիստին):

2.1.3 Ներդնել իր ողջ ներուժը և մարզական ունակությունները ի շահ Ակումբի, կատարել հնարավորինը` Ակումբին աջակցելու և Ակումբի հեղինակությունը ամրապնդելու համար, խուսափել ամեն տեսակի գործողություններից, որոնք կարող են որևէ կերպ վնաս հասցնել Ակումբին` մասնավորապես այն միջոցառումներից առաջ (ընթացքում), որոնց վերջինս մասնակցում է:

2.1.4 Մասնակցել Ակումբի կողմից անցկացվող բոլոր խաղերին և մարզումներին, խաղացողներին վերաբերող ցանկացած խորհրդակցությանն ու հանդիպման և մրցաշարերին նախապատրաստվելու նպատակով կազմակերպվող բոլոր միջոցառումներին: Սա անհրաժեշտ պայման է նույնիսկ այն դեպքում, երբ նրա մասնակցությունը խաղին որպես հիմնական կազմի խաղացող կամ պահեստային խաղացող չի դիտարկվում:

2.1.5 Իր ֆուտբոլային գործունեության ընթացքում վնասվածք ստանալու կամ վատառողջ լինելու դեպքում անմիջապես հայտնել Ակումբի բժշկին, տեղեկացնել Ակումբի կողմից նշանակված համապատասխան անձին կամ մարմնին բժշկի կատարած փորձաքննության արդյունքների մասին: Եթե ֆուտբոլիստը 3 օրից հետո չի կարողանում վերականգնել իր կայուն ֆիզիկական վիճակը կամ առողջական վիճակի պատճառով անկարող է մասնակցել խաղերին և մարզումներին, ապա նա պարտավոր է ներկայացնել բժշկական տեղեկանք:

2.1.6 Ընդունել ամբողջական մարզական և թերապևտիկ բուժման միջոցառումներ` հետևելով Ակումբի կողմից լիազորված անձի հրահանգներին` հաշվի առնելով խաղացողի անհատական իրավունքները:

2.1.7 Պայմանագրի գործողության ընթացքում խնայողաբար վերաբերվել Ակումբի կողմից տրամադրված սպորտային գույքին ու հանդերձանքին:

2.1.8 Պահպանել վարքագծի բարոյական նորմերը` Ակումբի և ազգային ասոցիացիայի հեղինակությանը վնաս չհասցնելու համար, չտարածել Ակումբի ներքին հարցերին վերաբերող ինֆորմացիա, եթե այն կարող է վնաս հասցնել Ակումբին:

2.1.9 Պահպանել առողջապրելակերպ և ֆիզիկական պատրաստվածության բարձր մակարդակ: Բարեխղճորեն նախապատրաստվել Ակումբի

կողմից անցկացվող բոլոր միջոցառումներին, հետևելով կենսակերպին վերաբերող մարզչի հրահանգներին:

2.1.10 Մարզական ճիշտ վարքագիծ ցուցաբերել հանդիպման կամ մարզումներում ներգրավված ցանկացած անձի նկատմամբ, մասնավորապես առանց բողոքի արտահայտման հարգել խաղի ընթացքում մրցավարական խմբի կողմից ընդունված որոշումները:

2.1.11 Առանց Ակումբի գրավոր թույլտվության չընդգրկվել որևէ ուրիշ թիմում, բանակցություններ չվարել այլ Ակումբների հետ իր տեղափոխման հարցերով, բացառությամբ «Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության» կանոնակարգով նախատեսված դեպքերի:

2.1.12 Չկատարել խաղադրույքներ և չծավալել նմանատիպ այլ գործունեություն ֆուտբոլային ասպարեզում:

2.1.13 Ձերծ մնալ ֆուտբոլային այլ միջոցառումներին մասնակցելուց, որոնք իրական վտանգ են ներկայացնում և անցկացվում են ակումբի անվտանգության համակարգից դուրս:

2.1.14 Ենթարկվել ֆուտբոլային մարմինների բոլոր հակախթանիչային կանոնակարգերին:

2.2. **«Ֆուտբոլիստ»-ը** իրավունք ունի՝

2.2.1 Պահանջելու, որ Ակումբը ժամանակին վճարի սույն պայմանագրով (կամ հավելվածով) նախատեսված ամենամսյա աշխատավարձը:

2.2.2 Պահանջելու, որ Ակումբը պատշաճ կերպով կատարի սույն պայմանագրով նախատեսված իր պարտականությունները:

2.2.3 Ակումբի կողմից իր պարտականությունների կոպիտ խախտումների դեպքում դիմել ՀՖՖ «Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխման» կոմիտեին:

2.2.4 Օգտվել վճարովի արձակուրդի իրավունքից՝ տարեկան առնվազն 28 օր ժամանակահատվածով, ինչը պետք է համաձայնեցված լինի Ակումբի խաղային և մարզումային ծրագրի հետ:

2.2.5 Ակումբի բժշկի հետ տարակարծության դեպքում՝ ստանալու այլընտրանքային մասնագետի եզրակացություն: Տարբեր կարծիքների դեպքում երկու կողմերը համաձայնում են ընդունել երրորդ անկախ կարծիքը, որը դառնում է պարտադիր:

# 3. Ակումբի իրավունքները և պարտավորությունները

3.1 **Ակումբը** պարտավորվում է՝

3.1.1 Ընդունել վերոգրյալ կանոնադրություններն ու կանոնակարգերը և ղեկավարվել դրանցով:

3.1.2 Ենթարկվել ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի ղեկավար մարմինների համապատասխան կանոնադրություններով և կանոնակարգերով՝ իրենց լիազորությունների շրջանակներում ընդունված որոշումներին:

3.1.3 Ժամանակին վճարել աշխատավարձը, ինչպես նաև խաղացողին տրվող այլ վճարումները կամ պարգևատրումները, սույն պայմանագրի 6-րդ գլխով նախատեսված կարգով:

3.1.4 Ապահովել մարզումների և ֆուտբոլային խաղերի կազմակերպումը համապատասխան մասնագետների ղեկավարությամբ, ինչպես նաև ֆուտբոլիստին՝ բժշկական և տեխնիկական բոլոր պահանջներին և պայմաններին համապատասխան մարզումային և խաղային հրապարակներով, մարզական հագուստով և գույքով, նաև այլ անհրաժեշտ կենցաղային հարմարություններով:

3.1.5 Պահպանել ֆուտբոլիստի ամենամսյա աշխատավարձը և այլ պարգևատրումները նրան Հայաստանի ազգային հավաքական ժամանակավորապես հրավիրելու դեպքում:

3.1.6 ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան ապահովագրել Ֆուտբոլիստին: Ապահովագրությունը պետք է ընդգրկի նաև այն ժամանակահատվածը, երբ Ֆուտբոլիստը, մարզումներ և խաղեր անցկացնելու համար գտնվում է ազգային հավաքականի կազմում:

3.1.7 ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան կատարել սույն պայմանագրից բխող հարկային պարտականությունները:

3.1.8 Զերծ մնալ ֆուտբոլիստի նկատմամբ որևէ տեսակի խտրականության դրսևորումից:

3.1.9 Ենթարկվել ֆուտբոլային մարմինների բոլոր հակախթանիչային կանոնակարգերին:

3.1.10 Վարել և պահպանել ֆուտբոլիստի ստացած վնասվածքների վերաբերյալ համապատասխան գրառումներ (ներառյալ ազգային հավաքականում ստացված վնասվածքների)՝ միաժամանակ երաշխավորելով դրանց գաղտնիությունը:

3.1.11. Պայմանագրում պարզաբանվում է Ակումբի առողջապահության և անվտանգության քաղաքականությունը, որը ներառում է մշտական բժշկական/ատամնաբուժական հետազոտություն, ինչպես նաև բուժում որակավորված անձնակազմի կողմից ֆուտբոլային պարտականությունները կատարելու ժամանակ: Սա նաև վերաբերում է հակադոպինգային կանխարգելմանը:

3.2 **Ակումբն** իրավունք ունի`

3.2.1 Պահանջելու ֆուտբոլիստից պատշաճ կերպով կատարելու սույն պայմանագրով, ինչպես նաև ՀՖՖ-ի, ՖԻՖԱ-ի, ՈՒԵՖԱ-ի կանոնադրություններով և կանոնակարգերով նախատեսված պարտականությունները:

3.2.2 Ֆուտբոլիստի կողմից իր պարտականությունները կոպտորեն խախտելու դեպքում, պատասխանատվության ենթարկելու վերջինիս` համաձայն Ակումբի կողմից ընդունված կանոնակարգերի:

## 4. Անձնական ոչ գույքային իրավունքներ

4.1 Ակումբը ճանաչում է ֆուտբոլիստի անձնական ոչ գույքային իրավունքները: Ֆուտբոլիստը լիազորում է Ակումբին` օգտագործելու իր անձնական ոչ գույքային իրավունքներն ընդհանուր շահի համար:

4.2 Այդ իրավունքների ընդհանուր օգտագործումը տեղի է ունենում Ակումբի և ֆուտբոլիստի միջև կնքված պայմանագրի հիման վրա:

*Պայմանագրում պետք է հստակ ամրագրվեն այն իրավունքները, որոնք անմիջականորեն պատկանում են խաղացողին, և նրանք, որոնք նա տրամադրում է Ակումբին, ընդհանուր շահերը ներկայացնելու համար:*

## 5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ------------ և ավարտվում ------------------:

5.2 Պայմանագրի ժամկետի ավարտից հետո այն կարող է երկարացվել կողմերի համաձայնությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

## 6. Աշխատավարձը և պարգևատրումները

Ֆուտբոլիստին տրվում է ամենամսյա աշխատավարձ և պարգևատրումներ` համաձայն պայմանագրին կցված և նրա անբաժանելի մասը կազմող հավելված ----------ի:

*Աշխատավարձի վճարման կարգն ու ժամկետը, ինչպես նաև պարգևատրումների վճարման կարգը, նույնպես սահմանվում են նշված հավելվածով:*

## 7. Պայմանագրի լուծումը

7.1 Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կողմերի համաձայնությամբ:

7.2 Սույն պայմանագիրը կողմերից մեկի պահանջով կարող է լուծվել ՀՖՖ համապատասխան կոմիտեի որոշմամբ, միայն մյուս կողմի թույլ տված պայմանագրի էական խախտման դեպքում կամ ՀՀ գործող օրենսդրությամբ, ՀՖՖ-ի, ՈՒԵՖԱ-ի, ՖԻՖԱ-ի համապատասխան կանոնակարգերով նախատեսված դեպքերում և կարգով:

7.3 Եթե խաղացողը մարզումների, հավաքների, խաղերի կամ մրցուղևորության ժամանակ ստացած աշխատանքային խեղման / վնասվածք/ պատճառով կորցրել է աշխատունակությունը, ապա նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը առանց ֆուտբոլիստի համաձայնության չի կարող լուծվել ակումբի նախաձեռնությամբ մինչև ֆուտբոլիստի աշխատունակության վերականգնումը կամ հաշմանդամության կարգի որոշումը:

## 8. Վարձակալություն

Պայմանագիրը պետք է ներառի դրույթ նաև Ֆուտբոլիստի հնարավոր այլ Ակումբ վարձակալությամբ տեղափոխվելու պայմանների մասին, որը հնարավոր է բացառապես կողմերի համաձայնությամբ, գործող կանոնակարգին համապատասխան:

## 9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Կողմերի միջև առաջացած վեճերը ենթակա են կարգավորման անմիջական բանակցությունների միջոցով, ՀՀ գործող օրենսդրության շրջանակներում, ինչպես նաև ՀՖՖ, ՈՒԵՖԱ-ի, ՖԻՖԱ-ի գործող կանոնադրություններին և կանոնակարգերին համապատասխան: Եթե բանակցությունները դրական արդյունք չեն տալիս, ապա վեճը ենթակա է լուծման ՀՖՖ-ի Վեճերի Լուծման Պալատի կողմից՝ վերջինիս կանոնակարգի դրույթներին համապատասխան:

9.2 Սույն պայմանագրի դրույթները կարող են փոխվել միայն Կողմերի գրավոր համաձայնությամբ, մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, որն որպես անբաժանելի մաս կցվում է սույն պայմանագրին և ենթակա է գրանցման ՀՖՖ-ում՝ համաձայն գործող կանոնակարգերի:

9.3 Սույն պայմանագրի որևէ դրույթի անվավերությունը չի կարող անդրադառնալ մյուս դրույթների վավերությանը:

9.4 Սույն պայմանագիրը ենթակա է պարտադիր գրանցման ՀՖՖ-ում:

9.5 Սույն պայմանագրին են կցված թվով ………… հավելվածներ:

9.6 Պայմանագրի, ինչպես նաև կից հավելվածների բոլոր էջերը ենթակա են վավերացման կողմերի ստորագրություններով:

9.7 Սույն պայմանագիրը կազմված է 3 օրինակից՝ մեկական օրինակ Կողմերին և մեկ օրինակ ՀՖՖ-ին:

| ***«Ակումբ»*** | **«Ֆուտբոլիստ»** |
| --- | --- |
| ---------------------------------------------------------- (անվանումը) | ---------------------------------------------------------- (անուն, ազգանուն, հայրանուն) |
| ---------------------------------------------------------- (հասցե) | ---------------------------------------------------------- (հասցե) |
| ---------------------------------------------------------- (բանկային վավերապայմանները) | ---------------------------------------------------------- (անձն,. ում կողմից է տրված, երբ) |
| Գործադիր տնօրեն՝ ---------------------------------------------------------- | ---------------------------------------------------------- (քաղաքացիությունը) |
| ---------------------------------------------------------- (ստորագրություն) | ................................................................ (ստորագրություն) |
| Կ.Տ | |

# ՀԱՎԵԼՎԱԾ 3

## Գլուխ I
## ՏՀՀ-ով իրականացվող միջազգային տրանսֆերը կարգավորող ընթացակարգ

**<u>Հոդված 1.</u> Գործունեության շրջանակ**

1. Տրանսֆերների համադրման համակարգը (ՏՀՀ, տեԲս Սահմանումներ բաժնի 21-րդ կետը) ստեղծվել է նպատակ ունենալով ֆուտբոլային ղեկավար մարմիններին մանրամասն տեղեկատվություն տրամադրել ֆուտբոլիստների միջազգային տրանսֆերների վերաբերյալ: Այն նպատակաուղղված է անհատական տրանսֆերների թափանցիկության մեծացմանն, որն իր հերթին կնպաստի ամբողջ տրանսֆերային համակարգի իսկության ու հեղինակության բարելավմանը:
2. ՏՀՀ-ն ստեղծվել է, որպեսզի հստակ տարանջատումներ դրվեն ֆուտբոլիստների միջազգային տրանսֆերների հետ կապված վճարումների միջև: Նման տեսակի բոլոր վճարումները պետք է մուտքագրվեն համակարգ, քանի որ սա միակ ճանապարհն է տրանսֆերների հետ կապված գումարների տեղափոխությունը վերահսկելու և գործընթացի թափանցիկությունն ապահովելու համար: Միևնույն ժամանակ համակարգը կերաշխավորի նաև, որ տվյալ տեղափոխությունն իրականում տեղի ունենա և ոչ թե գործ ունենանք մտացածին մի ֆուտբոլիստի տեղափոխության հետ, որը հնարել են փողի տեղաշարժի (փողի լվացման) նպատակով:
3. ՏՀՀ-ն կարգավորում է անչափահաս ֆուտբոլիստների պաշտպանության գործընթացը: Եթե անչափահաս ֆուտբոլիստն առաջին անգամ գրանցվում է այն երկրում, որի քաղաքացին չի հանդիսանում կամ եթե ներգրավված է միջազգային տրանսֆերի մեջ, ապա այս դեպքում անհրաժեշտ է ստանալ ՖԻՖԱ-ի Ֆուտբոլիստների կարգավիճակային կոմիտեի կողմից նշանակված ենթակոմիտեի հաստատումը (տեԲս սույն հավելվածի 3-րդ գլխի 4-րդ հոդվածը):
4. ՏՀՀ-ն էլեկտրոնային համակարգ է, որի միջոցով ստեղծվում է էլեկտրոնային միջազգային տրանսֆերային սերտիֆիկատը (ՄՏՍ): Համաձայն սույն հավելվածի 2-րդ հոդվածի 5-րդ կետի՝ ՏՀՀ-ով իրականացվող համապատասխան գործընթացն ամբողջությամբ փոխարինելու է ֆաքսով ՄՏՍ-ի տրամադրման գործընթացին:
5. ՏՀՀ-ի կիրառումը պարտադիր է մեծ ֆուտբոլում ներգրավված արական սեռի պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների միջազգային տրանսֆերների

դեպքում: Նման ցանկացած ֆուտբոլիստի գրանցում ՏՀՀ-ից դուրս համարվում է անվավեր: Սույն հավելվածի հաջորդ հոդվածներում մատնանշվող «ֆուտբոլիստ» տերմինը վերաբերում է միայն մեծ ֆուտբոլում հանդես եկող արական սեռի ֆուտբոլիստներին:

6. Միջազգային տրանսֆերը մուտքագրվում է ՏՀՀ ցանկացած այն դեպքերում, երբ ֆուտբոլիստը համապատասխան տեղափոխությունից հետո ձեռք է բերում կամ պահպանում է պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի կարգավիճակ (տեՏս սույն հավելվածի I գլխի 2-րդ հոդվածի 2-րդ կետը):

**<u>Հոդված 2.</u> Համակարգ**

1. ՏՀՀ-ն էլեկտրոնային տեղեկատվական համակարգ է՝ նախատեսված ասոցիացիաների և ակումբների համար, որի նպատակն է ղեկավարել և վերահսկել միջազգային տրանսֆերների գործընթացը:
2. Կախված տվյալ տրանսֆերի տեսակից՝ համակարգ մուտքագրվում է համապատասխան տեղեկատվություն:
3. Եթե համաձայն 3-րդ հավելվածի I գլխի 1-ին հոդվածի 5-րդ կետի միջազգային տրանսֆեր իրականացնելիս տրանսֆերային պայմանագիր չի ստորագրվել, ապա նոր ակումբը պետք է ՏՀՀ մուտքագրի տվյալ տրանսֆերին վերաբերող հատուկ տեղեկատվություն և համապատասխան փաստաթղթեր: Այնուհետև գործընթացն անցնում է ասոցիացիայի վերահսկողության ներքո՝ կապված ՄՏԱ-երի հարցման և տրամադրման ընթացակարգի հետ (տեՏս 8-րդ հոդվածը հաջորդիվ):
4. Եթե համաձայն 3-րդ հավելվածի I գլխի 1-ին հոդվածի 5-րդ կետի միջազգային տրանսֆեր իրականացնելիս ստորագրվել է տրանսֆերային պայմանագիր, ապա ներգրավված ակումբներն, իրարից անկախ, պայմանագրի ստորագրումից անմիջապես հետո պետք է ՏՀՀ մուտքագրեն տվյալ տրանսֆերին վերաբերող հատուկ տեղեկատվություն և համապատասխան փաստաթղթեր: Յուրաքանչյուր ակումբի կողմից մուտքագրված տեղեկատվությունը գնահատվում է՝ համեմատելով տվյալ ակումբի և նախկին ակումբի մուտքագրած ինֆորմացիայի կարևորագույն կետերը:
5. Սույն հոդվածի նախորդ կետում նկարագրված դեպքում՝ էլեկտրոնային ՄՏԱ-երի հարցման և տրամադրման գործընթացն անցնում է ասոցիացիայի վերահսկողության ներքո (տեՏս 8-րդ հոդվածը հաջորդիվ) ակումբների միջև համաձայնագրի ստորագրումից անմիջապես հետո:

**Հոդված 3.Համակարգից օգտվող կողմեր**

1. ՏՀՀ մուտքի իրավունք ունեցող կողմերը պետք է արդար գործեն:
2. ՏՀՀ մուտքի իրավունք ունեցող բոլոր կողմերը պետք է ամեն օր պարբերաբար ստուգեն ՏՀՀ-ն և անպատասխան չթողնեն ցանկացած տեսակի հարցերն ու հարցումները:
3. ՏՀՀ մուտքի իրավունք ունեցող կողմերը պետք է հաստատեն, որ ունեն բոլոր անհրաժեշտ միջոցները ՏՀՀ-ում իրենց պարտականություններն իրականացնելու համար:

## 3.1 Ակումբներ

1. Ակումբները պատասխանատու են տրանսֆերի տվյալները ՏՀՀ մուտքագրելու և հաստատելու համար, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում, մուտքագրված տվյալների համապատասխանությունը հաստատելու համար: Սա ներառում է նաև անհրաժեշտ փաստաթղթերի մուտքագրումը համակարգ:
2. Ակումբները պետք է հավաստիանան, որ տիրապետում են համապատասխան գիտելիքների և ունեն անհրաժեշտ փորձ իրենց պարտականությունները կատարելու համար: Ըստ այդմ ակումբները պետք է նշանակեն ՏՀՀ պատասխանատուների, որոնց համապատասխանաբար կներկայացնեն ՏՀՀ-ից օգտվելու կարգը: Տարբեր տեխնիկական հարցերով նրանց կաջակցեն նաև ՏՀՀ ադմինիստրատորներն ու համապատասխան թեժ գիծը:

## 3.2 Ասոցիացիաներ

1. Ասոցիացիաները պատասխանատու են իրենց մրցաշրջանի և գրանցման ժամանակահատվածների տվյալների, ինչպես նաև ակումբների (մասնավորապես ներառյալ ակումբների կատեգորիաները՝ կապված մարզումային փոխհատուցման հետ) և գործակալների տվյալների պահպանման համար: Ավելին, նրանք պատասխանատու են էլեկտրոնային ՄՏՍ-երի տրամադրման և ստացման գործընթացի համար (տեԲս 8-րդ հոդվածը ներքևում), ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, իրենց ասոցիացիայի գրանցումից հանված խաղացողների հաստատման համար:
2. Ասոցիացիաներն երաշխավորում են, որ տիրապետում են համապատասխան գիտելիքների և ունեն անհրաժեշտ փորձ իրենց պարտականությունները կատարելու համար: Ըստ այդմ՝ ասոցիացիաները պետք է նշանակեն ՏՀՀ պատասխանատուների, որոնց համապատասխանաբար կներկայացնեն ՏՀՀ-ից օգտվելու կարգը: Տարբեր տեխնիկական հարցերով նրանց կաջակցեն նաև ՏՀՀ ադմինիստրատորներն ու համապատասխան թեժ գիծը:

### 3.3 ՖԻՖԱ-ի ընդհանուր քարտուղարություն

1. ՖԻՖԱ-ի ընդհանուր քարտուղարության բազմազան կոմպետենտ բաժիններ պատասխանատու են `
   ա. համապատասխան սպորտային պատժամիջոցներ մուտքագրելու, կանոնակարգի հնարավոր խախտումները կարգավորելու համար
   բ. համապատասխան կարգապահական պատժամիջոցներ մուտքագրելու համար
   գ. ասոցիացիայի կասկածները մուտքագրելու համար:

### 3.4 ՏՀՀ ադմինիստրատորներ

ՏՀՀ ադմինիստրատորները պատասխանատու են ՏՀՀ-ից օգտվողների անխափան մուտքն ապահովելու համար:

### <u>Հոդված 4.</u> Ակումբների պարտականությունները

1. Ակումբները պետք է կիրառեն ՏՀՀ-ն միջազգային տրանսֆերներ իրականացնելու համար:
2. Ակումբները պարտավոր են համակարգ մուտքագրել տրանսֆերի տվյալները` լիաբեռնելով պարտադիր փաստաթղթերը (տեԲս 3-րդ հավելվածի I գլխի 8.2 հոդվածի 1-ին կետը) և կախված տրանսֆերի տեսակից` լրացնելով հետևյալ պարտադիր տեղեկատվությունը`
   - տրանսֆերի տեսակ (ֆուտբոլիստի գնում, վաճառք, փոխանակություն, ազատ խաղացողի կարգավիճակ)
   - Նշում` արդյոք տրանսֆերն իրականացվում է վճարման դիմաց
   - Նշում`արդյոքֆուտբոլիստըտեղափոխվումէվարձակալությամբ և, հետևաբար, արդյոք ֆուտբոլիստը վերադառնում է վարձակալությունից, տեղափոխվում է մշտապես թե վերջինիս վարձակալությունը երկարացվում է:
   - Նախկին ակումբ
   - Նախկին ասոցիացիա
   - Վճարման վերջին օր
   - Վճարման արժույթ
   - Նշում` արդյոք մարզումային փոխհատուցումը մաս-մաս թե ամբողջությամբ է վճարվելու
   - Ակումբի (ակումբների) գործակալ (եթե առկա է), ինչպես նաև նրա լիազորությունները
   - Ֆուտբոլիստի (ֆուտբոլիստների) գործակալ (եթե առկա է)

- Ֆուտբոլիստի անունն, ազգությունն ու ծննդյան թիվը
- Ֆուտբոլիստի կնքած վերջին պայմանագրի ուժի մեջ մտնելու և ավարտման ամսաթվերը
- Ֆուտբոլիստի վերջին պայմանագրի լուծարման պատճառը
- Ֆուտբոլիստի կնքած նոր պայմանագրի ուժի մեջ մտնելու և ավարտման ամսաթվերը
- Համաձայնեցված և պայմանական մարզումային փոխհատուցման ամբողջական տվյալները
- Մարզումային փոխհատուցում
- Մարզումային փոխհատուցման վճարման գրաֆիկը՝ ներառյալ վճարման տեսակը, աղբյուրը կամ գումարը ստացող ակումբի անունը, օրը, գումարի չափը և մարզումային փոխհատուցման պայմանները
- Երրորդ կողմին վճարելու մասին հայտարարությունը
- Բանկի տվյալները
- (բանկի անունը կամ բանկային կոդը, հաշվեհամարը կամ IBAN, բանկի հասցեն, ստացող բանկի անվանումը)

3. Ակումբները պարտավոր են նաև հաստատել համակարգ մուտքագրած տրանսֆերի տվյալները:
4. Անհրաժեշտության դեպքում ակումբների պարտականությունն է նաև տրանսֆերի մեջ ներգրավված մյուս ակումբների հետ լուծել տրանսֆերի տվյալների համապատասխանության հարցերը:
5. ՄՏU-ի հարցման գործընթացին (տեՒս 3-րդ հավելվածի I գլխի 8.2 հոդվածի 1-ին կետը) ընթացք է տրվում միայն այն ժամանակ, երբ ակումբները՝ համաձայն սույն հոդվածի վերոնշյալ կետերի, բարեխղճորեն կատարում են իրենց պարտականությունները:
6. Վճարումն իրականացնելիս գումարը վճարող ակումբը պետք է ՏՀՀ մուտքագրի տվյալ դրամական փոխանցման ապացույցը:

**<u>Հոդված 5.</u> Ասոցիացիաների պարտականությունները**

Ասոցիացիաներն օգտագործում են ՏՀՀ-ն միջազգային տրանսֆերներ իրականացնելու համար:

**5.1Հիմնարար տվյալներ**

1. ԵԲվ գրանցման ժամանակահատվածների, ևԲ մրցաշրջանների սկսման ու ավարտման ամսաթվերը պետք է համակարգ մուտքագրվեն ուժի մեջ մտնելուց առնվազն 12 ամիս առաջ:

Բացառիկ դեպքերում և մինչև գրանցման ժամանակահատվածների ուժի մեջ մտնելը՝ ասոցիացիաները կարող են փոփոխել դրանք: Գրանցման ժամանակահատվածի ուժի մեջ մտնելուց հետո գրանցման ժամանակահատվածի ամսաթվերի փոփոխությունն անհնար է: Գրանցման ժամանակահատվածները պետք է միշտ համապատասխանեն III գլխի 6-րդ հոդվածի 2-րդ կետի պայմաններին:

2. Ակումբի հասցեն, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն և մարզումային կատեգորիան (տեԲս 4-րդ հավելվածի 4-րդ հոդվածը) պետք է պարբերաբար նորացվեն:
3. Ֆուտբոլիստների գործակալների արտոնագրման և ապահովագրության տվյալները պետք է պարբերաբար նորացվեն:

## 5.2 Տրանսֆերների վերաբերյալ տեղեկություն

1. Տրանսֆերի տվյալները մուտքագրելիս ակումբները պետք է համակարգում նշեն տրանսֆերի մեջ ներգրավված ֆուտբոլիստին (տեԲս 3-րդ հավելվածի I գլխի 4-րդ հոդվածի 2-րդ կետը): ՏՀՀ-ն պարունակում է բազմաթիվ ֆուտբոլիստների տվյալներ, ովքեր մասնակցել են ՖԻՖԱ-ի մրցաշարերին: Եթե տրանսֆերի մեջ ներգրավված ֆուտբոլիստի տվյալները ՏՀՀ-ում չկան, ապա ակուբները պետք է մուտքագրեն դրանք՝ որպես տրանսֆերի բաղկացուցիչ մաս: ՄՏՍ-ի հարցման գործընթացին (տեԲս 3-րդ հավելվածի I գլխի 8.2 հոդվածի 1-ին կետը) ընթացք է տրվում միայն այն բանից հետո, երբ ֆուտբոլիստի նախկին ասոցիացիան հաստատում է ֆուտբոլիստի տվյալները: Նախկին ասոցիացիան մերժում է ֆուտբոլիստի հաստատումը, եթե վերջինիս ինքնությունն ամբողջովին չի հաստատվում:
2. ՄՏՍ-ի հարցման գործընթացը (տեԲս 3-րդ հավելվածի I գլխի 8.2 հոդվածի 2-րդ կետը) համապատասխան ժամկետներում իրականացվում է նոր ասոցիացիայի կողմից:
3. Համապատասխան ժամկետներում ՄՏՍ-ի տրամադրման և ֆուտբոլիստին գրանցումից հանելու գործընթացը (տեԲս 3-րդ հավելվածի I գլխի 8.2 հոդվածի 3-րդ և 4-րդ կետերը) իրականացվում է նախկին ասոցիացիայի կողմից:
4. ՄՏՍ-ը ստանալու դեպքում նոր ասոցիացիան պետք է համակարգ մուտքագրի և հաստատի ֆուտբոլիստի գրանցման ամսաթիվը (տեԲս 3-րդ հավելվածի I գլխի 8.2 հոդվածի 1-ին կետը):
5. ՄՏՍ-ը մերժելու դեպքում (տեԲս 3-րդ հավելվածի I գլխի 8.2 հոդվածի 7-րդ կետը) նոր ասոցիացիան կաԲմ ընդունում, կաԲմ բողոքարկում է ՄՏՍ-ի մերժումը՝ կախված տվյալ գործի բնույթից:

6. Ժամանակավոր գրանցման դեպքում (տեՏս 3-րդ հավելվածի I գլխի 8.2 հոդվածի 6-րդ կետը) կամ այն դեպքում, երբ նոր ասոցիացիայի կողմից ՄՏՍ-ի մերժումը բողոքարկելուց հետո միանձնյա դատավորը ժամանակավոր գրանցման թույլտվություն է տվել (տեՏս ՖԻՖԱ-ի ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի 23-րդ հոդվածի 3-րդ կետը), նոր ասոցիացիան պետք է համակարգ մուտքագրի և հաստատի ֆուտբոլիստի գրանցման ամսաթիվը:

### 5.3. Սեմինարներ ակումբների ՏՀՀ պատասխանատուների համար

Ասոցիացիան պարտավոր է համապատասխան սեմինարներ անցկացնել ակումբների ՏՀՀ պատասխանատուների համար, որպեսզի վերջիններս կարողանան կատարել սույն հավելվածում ամրագրված իրենց պարտավորությունները:

### <u>Հոդված 6.</u> ՖԻՖԱ-ի ընդհանուր քարտուղարության դերը

1. ՖԻՖԱ-ի համապատասխան բաժինը, պահանջի դեպքում, զբաղվում է տվյալների անհամապատասխանության ցանկացած հարցով (validation exception) և, անհրաժեշտության դեպքում, հարցը դնում է կոմպետենտ, որոշում կայացնող մարմնի (օր.՝ ՖԻՖԱ-ի Ֆուտբոլիստների կարգավիճակային կոմիտեի, վերոնշյալ կոմիտեի միանձնյա դատավորի կամ Վեճերի լուծման պալատի/ ՎԼՊ կամ էլ ՎԼՊ դատավորի) քննարկմանը՝ կախված տվյալ գործի բնույթից, բացառությամբ, այսպես կոչված «Խաղացողի հաստատում»-ից, որի համար պատասխանատու է ներգրավված ասոցիացիան (տեՏս 3-րդ հավելվածի I գլխի 5.2 հոդվածի 1-ին կետը):
2. Պահանջի դեպքում՝ համապատասխան բաժինը զբաղվում է տվյալների անհամապատասխանության հարցերով (validation warning) և, անհրաժեշտության դեպքում, հարցը դնում է կոմպետենտ, որոշում կայացնող մարմնի, այսինքն՝ ՖԻՖԱ-ի Կարգապահական կոմիտեի քննարկմանը:
3. Սույն կանոնակարգի կիրառմանն առնչվող ընթացակարգերի շրջանակներում ՖԻՖԱ-ն կարող է օգտագործել ՏՀՀ-ի կողմից ստեղծված, ՏՀՀ-ում պարունակվող կամ ուսումնասիրությունների արդյունքում ՏՀՀ ՍՊԸ-ի կողմից ձեռք բերված (տեՏս 3-րդ հավելվածի I գլխի 7-րդ հոդվածի 4-րդ կետը) ցանկացած փաստաթուղթ կամ ապացույց՝ օրակարգում դրված հարցին հարիր լուծում տալու նպատակով:
4. ՏՀՀ-ին առնչվող սպորտային պատժամիջոցները մուտքագրվում են ՏՀՀ կոմպետենտ բաժնի կողմից:

5. ՏՀՀ-ին առնչվող կարգապահական պատժամիջոցները մուտքագրվում են ՏՀՀ կոմպետենտ բաժնի կողմից:
6. ՏՀՀ-ին առնչվող ասոցիացիայի պատժամիջոցները մուտքագրվում են ՏՀՀ կոմպետենտ բաժնի կողմից:

## Հոդված 7. ՖԻՖԱ ՏՀՀ ՍՊԸ-ի դերը

1. ՖԻՖԱ ՏՀՀ ՍՊԸ-ն պատասխանատու է համակարգի աշխատունակությունն ու անխափան մուտքն ապահովելու համար:
2. ՖԻՖԱ ՏՀՀ ՍՊԸ-ի պարտականությունն է ապահովել, որ բոլոր ասոցիացիաները կատարեն իրենց պարտավորությունները՝ կապված սույն հավելվածի դրույթների հետ, պարբերաբար անցկացնել պարապմունքներ և աջակցություն ցուցաբերել անդամ ասոցիացիաներին:
3. ՖԻՖԱ ՏՀՀ ՍՊԸ-ն նշանակում է ՏՀՀ ադմինիստրատորներ վերոհիշյալ պարտականությունները կատարելու նպատակով:
4. ՖԻՖԱ ՏՀՀ ՍՊԸ-ն ուսումնասիրում է այն անչափահաս ֆուտբոլիստների առաջին գրանցման և միջազգային տրանսֆերի հետ կապված հարցերը, ովքեր չեն հանդիսանում այն երկրի քաղաքացի, որի ակումբում ցանկանում են գրանցվել: Այս ուսումնասիրության նպատակն է ապահովել, որ ակումբներն ու ասոցիացիաները կատարեն սույն հավելվածում ամրագրված իրենց պարտավորությունները:

Այս դեպքում անչափահաս ֆուտբոլիստի առաջին գրանցմանն ու միջազգային տրանսֆերին առնչվող բոլոր կողմերը պարտավոր են համագործակցել փաստերի հավաստիությունն ապացուցելու նպատակով: Մասնավորապես, հիմնավոր հարցման դեպքում, կողմերը պետք է ներկայացնեն իրենց տրամադրության տակ գտնվող ցանկացած տեսակի փաստաթուղթ, տեղեկատվություն կամ այլ նյութեր: Ավելին, կողմերը պարտավոր են ձեռք բերել և ներկայացնել նաև այն փաստաթղթերը, տեղեկատվությունը կամ նյութերը, որոնք չեն գտնվում իրենց տրամադրության տակ, սակայն վերջիններս իրավասու են ձեռք բերել:

ՖԻՖԱ ՏՀՀ ՍՊԸ-ի հարցումները չկատարելու և անպատասխան թողնելու դեպքում, ՖԻՖԱ-ի Կարգապահական կոմիտեն կարող է կիրառել պատժամիջոցներ:

## Յոդված 8. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների տրանսֆերը կարգավորող վարչական գործընթաց

### 8.1 Սկզբունքներ

1. Ցանկացած պրոֆեսիոնալ ֆուտբոլիստ, ով գրանցված է տվյալ ասոցիացիայի որևէ ակումբում, իրավունք չունի խաղալու մեկ այլ ասոցիացիայի ակումբի կազմում, քանի դեռ համաձայն սույն հավելվածի դրույթների՝ նախկին ասոցիացիան չի տրամադրել, իսկ նոր ասոցիացիան չի ստացել ֆուտբոլիստի միջազգային տրանսֆերային սերտիֆիկատը (ՄՏՍ): ՄՏՍ-ը տրվում է բացարձակապես ՏՀՀ-ի միջոցով: Բացի ՏՀՀ-ով ստեղծված ՄՏՍ-ից, ոչ մի այլ ձևի ՄՏՍ վավեր չի համարվում:
2. ՏՀՀ-ով ՄՏՍ-ի հարցման վերջնաժամկետը նոր ասոցիացիայի գրանցման ժամանակահատվածի վերջին օրն է:
3. Նախկին ասոցիացիան, որը տրամադրում է ՄՏՍ-ը, համակարգ է մուտքագրում նաև ֆուտբոլիստի անձնագրի պատճենը (տեԲս III գլխի 7-րդ հոդվածը), որն ուղարկվում է նոր ասոցիացիային:

### 8.2 Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի համար ՄՏՍ-ի ստեղծումը

1. Բոլոր տվյալները, որոնք թույլ են տալիս նոր ասոցիացիային ՄՏՍ-ի հարցում կատարել, մուտքագրվում են ՏՀՀ, հաստատվում և համապատասխանեցվում են այն ակումբի կողմից, որը ցանկանում է գրանցել տվյալ ֆուտբոլիստին տվյալ ասոցիացիայի գրանցման ժամանակահատվածներից որևէ մեկի ընթացքում (տեԲս 3-րդ հավելվածի I գլխի 4-րդ հոդվածի 4-րդ կետը): Կախված իրականացվող տրանսֆերի տեսակից նոր ակումբը համակարգ է մուտքագրում որոշակի տվյալներ, որի դեպքում նոր ակումբը ՏՀՀ է մուտքագրում առնվազն հետևյալ փաստաթղթերը՝
   - նոր ակումբի և պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի միջև կնքված պայմանագրի պատճենը
   - նոր ակումբի և նախկին ակումբի միջև կնքված տրանսֆերային պայմանագրի պատճենը (եթե առկա է)
   - ֆուտբոլիստի ինքնությունը հաստատող փաստաթղթի պատճենը (օր.՝ անձնագիր)
   - ֆուտբոլիստի ծննդյան վկայականի պատճենը
   - ֆուտբոլիստի կնքած վերջին պայմանագրի ավարտման ամսաթվի ապացույց

Բացահայտ անհրաժեշտության դեպքում և եթե վերոնշյալ փաստաթղթերից որևէ մեկը առկա չէ ՖԻՖԱ-ի չորս պաշտոնական

լեզուներից որևէ մեկով (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն), ապա այն պետք է համակարգ ներմուծվի տվյալ փաստաթղթի համապատասխան թարգմանությամբ (ՖԻՖԱ-ի չորս պաշտոնական լեզուներից որևէ մեկով): Հակառակ դեպքում տվյալ ակումբի ասոցիացիան կարող է համակարգ ներմուծել տվյալ փաստաթղթի հիմնարար փաստերն ամփոփող պաշտոնական հաստատումը ՖԻՖԱ-ի չորս պաշտոնական լեզուներից որևէ մեկով: Սույն գործընթացը ձախողելու դեպքում պահանջվող փաստաթուղթը վավեր չի համարվում:

Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստն իրավունք չունի հանդես գալ պաշտոնական խաղերում իր նոր ակումբի անունից, քանի դեռ նախկին ասոցիացիան չի տրամադրել, իսկ նոր ասոցիացիան չի ստացել ֆուտբոլիստի ՄՏՍ-ը ՏՀՀ-ով, չի մուտքագրել և հաստատել ֆուտբոլիստի գրանցման ամսաթիվը (տեՏս 3-րդ հավելվածի I գլխի 5.2 հոդվածի 4-րդ կետը):

2. Այն դեպքում, երբ տրանսֆերը համակարգում սպասում է ՄՏՍ-ի հարցման, նոր ասոցիացիան պետք է անմիջապես ՏՀՀ-ով հարցում ուղարկի նախկին ասոցիացիային՝ պահանջելով պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի ՄՏՍ-ը (ՄՏՍ հարցում):
3. ՄՏՍ հարցումը ստանալուն պես նախկին ասոցիացիան անմիջապես հարցում է կատարում նախկին ակումբին և պրոֆեսիոնալ ֆուտբոլիստին հավաստիանալու համար, թե արդյոք ավարտվել է ֆուտբոլիստի պայմանագրի գործողության ժամկետը, արդյոք վաղաժամ լուծարումը կատարվել է փոխադարձ համաձայնությամբ կամ գոյություն ունեն արդյոք պայմանագրային վեճեր:
4. ՄՏՍ հարցումը ստանալու 7 օրվա ընթացքում նախկին ասոցիացիան, ՏՀՀ-ում համապատասխան բաժինը օգտագործելով, պետք է
   ա. կաՏմ ստեղծի ՄՏՍ-ը նոր ասոցիացիային ուղարկելու համար և մուտքագրի խաղացողին գրանցումից հանելու ամսաթիվը:
   բ. կաՏմ մերժի ՄՏՍ-ի հարցումը և տեղեկացնի նոր ասոցիացիային, որ ՄՏՍ-ը չի կարող տրամադրվել, քանի որ նախկին ակումբի և պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի միջև կնքված պայմանագիրը չի ավարտվել կամ նրանց միջև առկա չէ փոխադարձ համաձայնություն պայմանագրի վաղօրոք լուծման վերաբերյալ:
5. ՄՏՍ-ը ստանալուն պես նոր ասոցիացիան պետք է հաստատի տրանսֆերի ստացումը և ՏՀՀ մուտքագրի ֆուտբոլիստի գրանցման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն:
6. Եթե նոր ասոցիացիան հարցումն անելուց հետո 30 օրվա ընթացքում ՄՏՍ հարցմանը պատասխան չի ստանում, ապա այն անմիջապես ժամանակավոր հիմունքներով գրանցում է պրոֆեսիոնալ ֆուտբոլիստին նոր ակումբում (ժամանակավոր գրանցում): Նոր ասոցիացիան ՏՀՀ է մուտքագրում տվյալ ֆուտբոլիստի գրանցման

վերաբերյալ տվյալները (տեԲս 3-րդ հավելվածի I գլխի 5.2 հոդվածի 6-րդ կետը): Ժամանակավոր գրանցումը դառնում է մշտական ՄՏՍ հարցումը կատարելուց մեկ տարի անց: ՖԻՖԱ-ի Խաղացողների կարգավիճակային կոմիտեն կարող է չեղյալ համարել ժամանակավոր գրանցումը, եթե այդ մեկ տարվա ընթացքում նախկին ասոցիացիան հիմնավոր պատճառներ է ներկայացնում՝ բացատրելով, թե ինչու չի պատասխանել համապատասխան ՄՏՍ հարցմանը:

7. Նախկին ասոցիացիան ՄՏՍ չի տրամադրում, եթե նախկին ակումբի և պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի միջև պայմանագրային վեճ է ծագել: Այս դեպքում պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը, նախկին ակումբը և/կամ նոր ակումբը լիազորված են բողոք ներկայացնելու ՖԻՖԱ՝ համաձայն ՖԻՖԱ-ի Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի 22-րդ հոդվածի: Այնուհետև ՖԻՖԱ-ն 60 օրվա ընթացքում որոշում է կայացնում ՄՏՍ-ը հանձնելու և մարզական պատժամիջոցներ կիրառելու վերաբերյալ: Ամեն դեպքում սպորտային պատժամիջոցներ կիրառելու վերաբերյալ որոշումը պետք է ընդունվի նախքան ՄՏՍ տրամադրելը: ՄՏՍ-ի տրամադրումը չպետք է խոչընդոտի պայմանագրի խզման հետևանքով առաջացած փոխհատուցում ստանալու իրավունքը: Բացառիկ դեպքերում ՖԻՖԱ-ն կարող է դիմել ժամանակավոր միջոցների: Եթե կոմպետենտ մարմինը լիազորում է ժամանակավոր գրանցումը (տեԲս ՖԻՖԱ-ի Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի 23-րդ հոդվածի 3-րդ կետը), ապա նոր ասոցիացիան ՏՅՅ է մուտքագրում տվյալ ֆուտբոլիստի գրանցման վերաբերյալ տվյալներ (տեԲս 3-րդ հավելվածի I գլխի 5.2 հոդվածի 6-րդ կետը):

### 8.3. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի վարձակալություն

1. Վերոնշյալ կանոններն ու ընթացակարգը կիրառվում են նաև պրոֆեսիոնալ ֆուտբոլիստին այլ ասոցիացիայի ակումբ վարձակալության տրամադրելու կամ այլ ասոցիացիայի ակումբից վարձակալելու դեպքում:
2. Վարձակալությամբ տեղափոխված պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի գրանցման ժամանակ, նոր ակումբը պետք է ՏՅՅ մուտքագրի նախկին ակումբի հետ կնքած (հնարավոր է նաև ֆուտբոլիստի կողմից ստորագրած) վարձակալության պայմանագրի պատճենը (տեԲս 3-րդ հավելվածի I գլխի 8.2 հոդվածի 1-ին կետը): Վարձակալության պայմանագրի ժամկետները պետք է ներկայացվեն ՄՏՍ հարցմանը կից:
3. Վարձակալության ժամկետի ավարտին համապատասխան հարցմամբ (վարձակալության տվյալների մուտքագրմամբ) ՄՏՍ-ը ՏՅՅ-ով

վերադարձվում է պրոֆեսիոնալ ֆուտբոլիստին վարձակալության տրամադրած ակումբի ասոցիացիային:

4. Վարձակալության երկարացումն ու վարձակալության հետևանքով տեղի ունեցած տրանսֆերները ևս մուտքագրվում են ՏՀՀ:

## Հոդված 9. Պատժամիջոցներ

### 9.1. Ընդհանուր դրույթներ

1. Պատժամիջոցներ կիրառվում են այն ակումբի կամ ասոցիացիայի վրա, որը խախտել է սույն հավելվածի ցանկացած դրույթ:
2. Պատժամիջոցներ են կիրառվում նաև այն ակումբի կամ ասոցիացիայի վրա, որը կեղծ տվյալներ է մուտքարել համակարգ կամ անօրինական նպատակներով օգտագործել է ՏՀՀ-ն:
3. Ասոցիացիաներն ու ակումբները պատասխանատու են ՏՀՀ պատասխանատուների գործողությունների և նրանց կողմից համակարգ մուտքագրած տեղեկատվության համար:

### 9.2. Իրավասություն

1. ՖԻՖԱ-ի Կարգապահական կոմիտեն իրավունք ունի պատժամիջոցներ կիրառել՝ համաձայն ՖԻՖԱ-ի Կարգապահական օրենսգրքի:
2. Պատժամիջոցների կիրառման գործընթացը սկսում է ՖԻՖԱ-ն՝ կաԲմ իր նախաձեռնությամբ, կաԲմ ներգրավված կողմի հարցումով:

### 9.3. Պատժամիջոցներ ասոցիացիաների նկատմամբ

Համաձայն ՖԻՖԱ-ի Կարգապահական օրենսգրքի սույն հավելվածի դրույթները խախտելու դեպքում ասոցիացիաների վրա կիրառվում են մասնավորապես հետևյալ պատժամիջոցները՝

- նկատողություն կամ զգուշացում
- տուգանք
- որակազրկում մրցումներից
- պարգևատրումների վերադարձ

Այս պատժամիջոցները կարող են կիրառվել առանձին կամ միաժամանակ:

### 9.4. Պատժամիջոցներ ակումբների նկատմամբ

Համաձայն ՖԻՖԱ-ի Կարգապահական օրենսգրքի սույն հավելվածի դրույթները խախտելու դեպքում ակումբների վրա կիրառվում են մասնավորապես հետևյալ պատժամիջոցները՝

- նկատողություն կամ զգուշացում
- տուգանք
- խաղի արդյունքի չեղյալ հայտարարում
- գրանցված պարտություն
- որակազրկում մրցումներից
- միավորների կրճատում
- տեղափոխություն ցածրակարգ խումբ
- տրանսֆերային արգելք
- պարգևատրումների վերադարձ

Այս պատժամիջոցները կարող են կիրառվել առանձին կամ միաժամանակ:

## Գլուխ II
## ՏՅՅ-ից դուրս իրականացվող ֆուտբոլիստների միջազգային տրանսֆերը կարգավորող վարչական գործընթաց

**<u>Յոդված 1.</u> Սկզբունքներ**

Սույն հավելվածը վերաբերում է սիրողական ֆուտբոլիստների, կանանց, ֆուտզալ խաղացողների և այն պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների տրանսֆերներին, որոնց ասոցիացիաները չեն մասնակցում ՏՅՅ-ին:

1. Ցանկացած ֆուտբոլիստ, ով գրանցված է տվյալ ասոցիացիայի որևէ ակումբում, իրավունք չունի խաղալու մեկ այլ ասոցիացիայի ակումբի կազմում, քանի դեռ համաձայն սույն հավելվածի դրույթների՝ նախկին ասոցիացիան չի տրամադրել, իսկ նոր ասոցիացիան չի ստացել ֆուտբոլիստի ՄՏՎ-ը: ՄՏՎ-ը տրամադրվում է անվճար, առանց որևէ պայմանի և ժամանակային սահմանափակման: Վերոնշյալին հակասող բոլոր դրույթները համարվում են անվավեր: Տվյալ գործընթացն իրականացվում է ՖԻՖԱ-ի կողմից տրամադրված հատուկ ձևերի/բլանկերի միջոցով:ՄՏՎ տրամադրող ասոցիացիան ՄՏՎ-ի պատճենը ուղարկում է նաև ՖԻՖԱ:
2. Պրոֆեսիոնալ կարգավիճակ ունեցող խաղացողների դեպքում ՄՏՎ տրամադրող ասոցիացիան ՄՏՎ-ին կից պետք է ներկայացնի նաև ֆուտբոլիստի անձնագրի պատճենը:
3. Նախքան նոր Ասոցիացիա տեղափոխվելը պետք է իրագործվի ֆուտբոլիստի նկատմամբ կիրառված կարգապահական

յուրաքանչյուր պատժամիջոց կամ այն պետք է կիրառվի նոր Ասոցիացիայի կողմից, որտեղ ցանկանում է գրանցվել խաղացողը: ՄՏՍ տրամադրելուն պես նախկին Ասոցիացիան պարտավոր է յուրաքանչյուր չկրած պատժամիջոցի մասին գրավոր տեղեկացնել նոր Ասոցիացիային:

4. Նոր ասոցիացիան ՄՏՍ-ը ստանալուց հետո գրավոր տեղեկացնում է 12-23 տարեկան հասակում ֆուտբոլիստին մարզած և կրթած ակումբի(ների) ասոցիացիային(ներին) (տեԲս ՖԻՖԱ-ի ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի 7-րդ հոդվածը - ֆուտբոլիստի անձնագիր) այն մասին, որ որպես պրոֆեսիոնալ պատրաստվում է գրանցել ֆուտբոլիստին:

## <u>Հոդված 2.</u> Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստին ՄՏՍ տրամադրելը

1. Միջազգային տրանսֆերի դեպքում պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի գրանցումը կատարվում է սույն կանոնակարգի գլուխ 3-ում սահմանված դրույթներին համապատասխան: Նոր ակումբը պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի գրանցման դիմումը ՀՖՖ է ներկայացնում նրանում հաստատված գրանցման ժամանակահատվածներից որևէ մեկի ընթացքում: Դիմումին կից ներկայացվում է նոր ակումբի և պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի միջև կնքած պայմանագրի պատճենը: Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստն իրավունք չունի հանդես գալ իր նոր ակումբի կազմում, քանի դեռ նախկին ասոցիացիան չի տրամադրել, իսկ ՀՖՖ-ն չի ստացել ՄՏՍ-ը:
2. Գրանցման դիմումը ստանալուն պես ՀՖՖ-ն անմիջապես դիմում է նախկին ասոցիացիային պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի ՄՏՍ-ը ստանալու նպատակով (ՄՏՍ հարցում): ՄՏՍ-ի հարցման վերջնաժամկետը ՀՖՖ-ի գրանցման ժամանակահատվածի վերջին օրն է: Առանց որևէ հարցման այլ ասոցիացիայից հոժարակամ տրամադրված ՄՏՍ-ի պարագայում ՀՖՖ-ն լիազորված չէ գրանցել պրոֆեսիոնալ ֆուտբոլիստին:
3. ՄՏՍ հարցումը ստանալուն պես, նախկին ասոցիացիան անմիջապես հարցում է կատարում նախկին ակումբին և պրոֆեսիոնալ ֆուտբոլիստին հավաստիանալու համար, թե արդյոք ավարտվել է ֆուտբոլիստի պայմանագրի գործողության ժամկետը, արդյոք վաղաժամ լուծարումը կատարվել է փոխադարձ համաձայնությամբ կամ գոյություն ունեն արդյոք պայմանագրային վեճեր:
4. ՄՏՍ հարցումը ստանալուն պես՝ 7 օրվա ընթացքում նախկին ասոցիացիան պարտավոր է՝
   - տրամադրել ՄՏՍ-ը նոր ասոցիացիային կամ

- տեղեկացնել նոր ասոցիացիային, որ ՄՏՍ-ը չի կարող տրամադրվել, քանի որ նախկին ակումբի և պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի միջև պայմանագրի ժամկետը չի ավարտվել կամ տվյալ պայմանագրի վաղաժամ լուծարման վերաբերյալ չի եղել փոխադարձ համաձայնություն:

5. Եթե 30 օրվա ընթացքում ՄՏՍ հարցմանն որևէ պատասխան չի ստացվում, ապա ՀՖՖ-ն ժամանակավոր հիմունքներով գրանցում է տվյալ պրոֆեսիոնալ ֆուտբոլիստին նոր ակումբում («ժամանակավոր գրանցում»): Ժամանակավոր գրանցումը դառնում է մշտական ՄՏՍ հարցումը կատարելուց մեկ տարի անց: ՖԻՖԱ-ի Խաղացողների կարգավիճակային կոմիտեն կարող է չեղյալ համարել ժամանակավոր գրանցումը, եթե այդ մեկ տարվա ընթացքում նախկին ասոցիացիան հիմնավոր պատճառներ ներկայացնի՝ բացատրելով, թե ինչու չի պատասխանել համապատասխան ՄՏՍ հարցմանը:
6. Նախկին ասոցիացիան ՄՏՍ չի տրամադրում, եթե նախկին ակումբի և պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի միջև պայմանագրային վեճ է ծագել: Այս դեպքում պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը, նախկին ակումբը և/կամ նոր ակումբը լիազորված են բողոք ներկայացնելու ՖԻՖԱ՝ համաձայն ՖԻՖԱ-ի Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի 22-րդ հոդվածի: Այնուհետև ՖԻՖԱ-ն 60 օրվա ընթացքում որոշում է կայացնում ՄՏՍ-ը հանձնելու և մարզական պատժամիջոցներ կիրառելու վերաբերյալ: Ամեն դեպքում սպորտային պատժամիջոցներ կիրառելու վերաբերյալ որոշումը պետք է ընդունվի նախքան ՄՏՍ տրամադրելը: ՄՏՍ-ի տրամադրումը չպետք է խոչընդոտի պայմանագրի խզման հետևանքով առաջացած փոխհատուցում ստանալու իրավունքին: Բացառիկ դեպքերում ՖԻՖԱ-ն կարող է դիմել ժամանակավոր միջոցների:
7. Նոր ասոցիացիան տվյալ մրցաշրջանի համար կարող է խաղացողին շնորհել խաղալու ժամանակավոր իրավունք՝ հեռատիպով ուղարկված ՄՏՍ-ի հիման վրա: Եթե ՄՏՍ-ի բնօրինակն այդ ընթացքում չի ստացվում, ապա ֆուտբոլիստի խաղալու ժամանակավոր իրավունքը համարվում է վերջնական:
8. Ֆուտբոլիստին փորձնական խաղերում ներգրավելու նպատակով ՄՏՍ պահանջելն արգելվում է:
9. Վերոհիշյալ կանոններն ու ընթացակարգը վերաբերում են նաև պրոֆեսիոնալ այն ֆուտբոլիստներին, ովքեր տեղափոխվելով նոր ակումբ՝ ձեռք են բերում սիրողական կարգավիճակ:

**<u>Հոդված 3.</u> Սիրողական կարգավիճակ ունեցող ֆուտբոլիստներին ՄՏՍ տրամադրելը**

1. Միջազգային տրանսֆերի դեպքում սիրողական կարգավիճակ ունեցող ֆուտբոլիստի գրանցումը կատարվում է սույն կանոնակարգի 3-րդ գլխում սահմանված դրույթներին համապատասխան: Նոր ակումբը սիրողական ֆուտբոլիստի գրանցման դիմումը ՀՖՖ է ներկայացնում նրանում հաստատված գրանցման ժամանակահատվածներից որևէ մեկի ընթացքում:
2. Գրանցման դիմումը ստանալուն պես ՀՖՖ-ն անմիջապես դիմում է նախկին ասոցիացիային ֆուտբոլիստի ՄՏՍ-ը ստանալու նպատակով (ՄՏՍ հարցում):
3. ՄՏՍ հարցումը ստանալուն պես՝ 7 օրվա ընթացքում, նախկին ասոցիացիան պարտավոր է ՀՖՖ-ին տրամադրել ՄՏՍ-ը:
4. Եթե ՀՖՖ-ն հարցումն անելուց հետո 30 օրվա ընթացքում ՄՏՍ հարցմանը պատասխան չի ստանում, ապա այն անմիջապես ժամանակավոր հիմունքներով գրանցում է սիրողական ֆուտբոլիստին նոր ակումբում (ժամանակավոր գրանցում): Ժամանակավոր գրանցումը դառնում է մշտական ՄՏՍ հարցումը կատարելուց մեկ տարի անց: ՖԻՖԱ-ի Խաղացողների կարգավիճակային կոմիտեն կարող է չեղյալ համարել ժամանակավոր գրանցումը, եթե այդ մեկ տարվա ընթացքում նախկին ասոցիացիան հիմնավոր պատճառներ է ներկայացնում՝ բացատրելով, թե ինչու չի պատասխանել համապատասխան ՄՏՍ հարցմանը:
5. Վերոհիշյալ կանոններն ու ընթացակարգը վերաբերում են նաև սիրողական այն ֆուտբոլիստներին, ովքեր տեղափոխվելով նոր ակումբ՝ ձեռք են բերում պրոֆեսիոնալ կարգավիճակ:

**<u>Հոդված 4.</u> Ֆուտբոլիստների վարձակալություն**

1. Վերոնշյալ կանոններն ու ընթացակարգը կիրառվում են նաև պրոֆեսիոնալ ֆուտբոլիստին այլ ասոցիացիայի ակումբ վարձակալության տրամադրելու կամ այլ ասոցիացիայի ակումբից վարձակալելու դեպքում:
2. Վարձակալության պայմանագրի ժամկետները պետք է ներկայացվեն ՄՏՍ հարցմանը կից:
3. Վարձակալության ժամկետի ավարտին համապատասխան հարցմամբ ՄՏՍ-ը պետք է վերադարձվի պրոֆեսիոնալ ֆուտբոլիստին վարձակալության տրամադրած ակումբի ասոցիացիային:

# Գլուխ III
# Անչափահասների առաջին գրանցումն ու տրանսֆերը կարգավորող ընթացակարգն ու ակադեմիաներում անչափահաս ֆուտբոլիստների գրանցումը

**Հոդված 1.** **Ընդհանուր դրույթներ**

1. Մինչև 12 տարեկան խաղացողների համար ՄՏՍ չի պահանջվում:
2. Միջազգային տրանսֆեր թույլատրվում է միայն 18 տարին լրացած ֆուտբոլիստին:

   Մինչև 18 տարեկան ֆուտբոլիստին չի թույլատրվում տրամադրել միջազգային տրանսֆեր՝ բացառությամբ հետևյալ դեպքերի:

   2.1. Եթե ֆուտբոլիստի ծնողները ոչ ֆուտբոլային դրդապատճառներով տեղափոխվում են այն երկիր, որտեղ գտնվում է նրա նոր Ակումբը:

   2.2. Եթե տրանսֆերն իրականացվում է Եվրոպական Միության (ԵՄ) կամ Եվրոպական տնտեսական գոտու (ԵՏԳ) տարածքում, և եթե ֆուտբոլիստը 16-ից 18 տարեկան է, ապա նոր ակումբը բավարարում է հետևյալ նվազագույն պահանջները՝

   - այն ապահովում է ֆուտբոլիստի համապատասխան ֆուտբոլային կրթությունը և/կամ մարզումները տվյալ երկրի լավագույն ստանդարտներին համապատասխան,
   - ի լրումն ֆուտբոլային կրթության և/կամ մարզումների՝ ակումբը ապահովում է ֆուտբոլիստի ակադեմիական և/կամ դպրոցական և/կամ մասնագիտական կրթությունը, որը թույլ կտա ֆուտբոլիստին պրոֆեսիոնալ գործունեությունը դադարեցնելուց հետո զբաղվել այլ կարիերայով,
   - այն իրականացնում է բոլոր անհրաժեշտ միջոցառումները ֆուտբոլիստի համար հնարավորինս լավագույն պայմաններ ապահովելու նպատակով (հյուրընկալող ընտանիքում կամ ակումբում օպտիմալ կենսական պայմանների ապահովումը, ակումբում ուսուցիչ-դաստիարակի նշանակումը և այլն):
   - նման ֆուտբոլիստ գրանցելիս ակումբը համապատասխան ասոցիացիային տրամադրում է վերոհիշյալ պարտավորությունները ստանձնելու մասին ապացույցներ:

   2.3. Եթե ֆուտբոլիստը բնակվում է պետական սահմանից ոչ ավել քան 50կմ հեռավորության վրա, իսկ հարևան ասոցիացիայի ակումբը, որտեղ ֆուտբոլիստը ցանկանում է գրանցվել, ևս գտնվում է այդ սահմանից 50կմ հեռավորության վրա:

Նման դեպքերում ֆուտբոլիստը շարունակում է ապրել իր բնակավայրում, իսկ համապատասխան երկու ասոցիացիաները տալիս են իրենց լիարժեք համաձայնությունը:

Ֆուտբոլիստի բնակավայրի և ակումբի միջև եղած առավելագույն թույլատրելի հեռավորությունը 100կմ է:

3. Սույն հոդվածի պայմանները վերաբերում են նաև ցանկացած ֆուտբոլիստի, ով նախկինում երբևիցե գրանցված չի եղել որևէ ակումբում և չի հանդիսանում այն երկրի քաղաքացին, որտեղ առաջին անգամ ցանկանում է գրանցվել:

## Հոդված 2. Սկզբունքներ

1. Անչափահասի առաջին գրանցման (համաձայն սույն հավելվածի III գլխի 1-ին հոդվածի 3-րդ կետի) կամ միջազգային տրանսֆերի (համաձայն սույն հավելվածի III գլխի 1-ին հոդվածի 2-րդ կետի) ընթացակարգերը ենթակա են իրականացման ՏՀՀ էլեկտրոնային համակարգի միջոցով:
2. Բացառությամբ սույն կանոնակարգում նշված դեպքերի՝ անչափահասի առաջին գրանցումն ու միջազգային տրանսֆերը կարգավորվում են ՖԻՖԱ-ի Խաղացողների կարգավիճակային կոմիտեի և Վեճերի լուծման պալատի ընթացակարգային կանոններով (հաշվի առնելով էլեկտրոնային տարբերակով դրանք կատարելու հանգամանքը՝ հնարավոր են աննշան փոփոխություններ):

## Հոդված 3. Անդամ ասոցիացիաների պարտականությունները

1. Բոլոր անդամ ասոցիացիաները պետք է պարբերաբար՝ նվազագույնը երեք օրը մեկ, ստուգեն ՏՀՀ էլեկտրոնային համակարգի «Անչափահասներ» բաժինը և անպատասխան չթողնեն իրենց ուղղված ցանկացած հարց կամ հարցում:
2. Անդամ ասոցիացիաները ամբողջությամբ պատասխանատվություն են կրում համակարգում առաջացած ցանկացած ընթացակարգային թերության համար, որը դիտվում է որպես վերոնշյալ դրույթի խախտում:

## Հոդված 4. Ենթակոմիտե

1. Անչափահասի յուրաքանչյուր միջազգային տրանսֆեր (համաձայն 3-րդ հավելվածի III գլխի 1-ին հոդվածի 2-րդ կետի) և յուրաքանչյուր առաջին գրանցում (համաձայն 3-րդ հավելվածի III գլխի 1-ին հոդվածի 3-րդ կետի) ենթակա է ՖԻՖԱ-ի Ֆուտբոլիստների կարգավիճակային կոմիտեի կողմից այդ նպատակով ստեղծված ՖԻՖԱ-ի ենթակոմիտեի հաստատմանը:

Խաղացողների կարգավիճակային կոմիտեի կողմից նշանակված ենթակոմիտեն բաղկացած է Խաղացողների կարգավիճակային կոմիտեի նախագահից, նախագահի տեղակալից և 9 անդամներից:

Որպես կանոն ենթակոմիտեն որոշումներն ընդունում է առնվազն երեք անդամների ներկայությամբ: Արտակարգ դեպքերում նախագահը կամ նրա կողմից նշանակված անդամը կարող է որոշումներ ընդունել որպես միանձնյա դատավոր:

2. Անչափահասի յուրաքանչյուր միջազգային տրանսֆերի և առաջին գրանցման վերաբերյալ դիմումը ներկայացնում է այն ասոցիացիան, որը ցանկանում է գրանցել տվյալ ֆուտբոլիստին:

   Նախկին ասոցիացիային հնարավորություն է ընձեռվում ներկայացնելու իր դիրքորոշումը:

3. Ասոցիացիայի կողմից միջազգային տրանսֆերային սերտիֆիկատ կամ առաջին գրանցում ստանալու նպատակով հարցումը կատարվում է ենթակոմիտեի կողմից ասոցիացիայի դիմումը հաստատելուց հետո:

4. 4. Սույն հոդվածի դրույթների ցանկացած խախտման դեպքում Կարգապահական կոմիտեի կողմից կիրառվում են համապատասխան պատժամիջոցներ՝ ՖԻՖԱ-ի Կարգապահական օրենսգրքի համաձայն: Պատժամիջոցներ են կիրառվում ինչպես նոր ասոցիացիայի հանդեպ, որը չի դիմել ենթակոմիտեին, այնպես էլ նախկին ասոցիացիայի նկատմամբ, որը միջազգային տրանսֆերային սերտիֆիկատ է տրամադրել առանց ենթակոմիտեի հաստատման:

Պատժամիջոցներ են կիրառվում նաև այն ակումբների նկատմամբ, որոնք համաձայնության են եկել տվյալ անչափահաս ֆուտբոլիստի տրանսֆերի վերաբերյալ (առանց ենթակոմիտեի հաստատման):

### <u>Հոդված 5.</u> Ընթացակարգեր

1. Ընթացակարգերի մեջ ներգրավված բոլոր կողմերը պետք է բարեխիղճ գործեն և չխեղաթյուրեն ենթակոմիտեին ներկայացրած փաստերը:
2. Ենթակոմիտեն վերահսկում է, որպեսզի անդամ ասոցիացիաները առաջնորդվեն վերոնշյալ դրույթով: Համաձայն ՖԻՖԱ-ի Կարգապահական օրենսգրքի՝ Կարգապահական կոմիտեն պատժամիջոցներ է կիրառում այն կողմի նկատմամբ, ով խախտում է այդ դրույթը (օրինակ՝ ներկայացնում է կեղծ փաստաթղթեր):

### <u>Հոդված 6.</u> Ընթացակարգի սկիզբը, փաստաթղթերի ներկայացումը

1. Անչափահասի առաջին գրանցման (տեՏս 3-րդ հավելվածի III գլխի 1-ին հոդվածի 3-րդ կետը) կամ միջազգային տրանսֆերի (տեՏս

3-րդ հավելվածի III գլխի 1-ին հոդվածի 2-րդ կետը) հաստատման նպատակով ներկայացված դիմումը մուտքագրվում է համակարգ տվյալ ասոցիացիայի կողմից: Չմուտքագրված դիմումները չեն քննարկվում: Դիմումները հաստատվում են ենթակոմիտեի կողմից համակարգի միջոցով:

2. Կախված դիմումի բնույթից՝ ասոցիացիան պարտավորված է նաև ՏՅՅ մուտքագրել հետևյալ փաստաթղթերը՝
   - ֆուտբոլիստի անձն ու ազգությունը հաստատող ապացույց
   - ֆուտբոլիստի ծնողների անձն ու ազգությունը հաստատող ապացույց
   - ֆուտբոլիստի ծննդյան ամսաթվի ապացույց (ծննդյան վկայական)
   - ֆուտբոլիստի աշխատանքային պայմանագիր
   - ֆուտբոլիստի ծնողների աշխատանքային պայմանագիր
   - ֆուտբոլիստի աշխատանքի թույլտվություն
   - ֆուտբոլիստի ծնողների աշխատանքի թույլտվություն
   - ֆուտբոլիստի բնակության վայրի մասին ապացույց
   - ֆուտբոլիստի ծնողների բնակության վայրի մասին ապացույց
   - փաստաթղթեր ակադեմիական կրթություն ստանալու վերաբերյալ
   - փաստաթղթեր ֆուտբոլային կրթություն ստանալու վերաբերյալ
   - բնակության, խնամակալության փաստաթղթեր
   - ծնողների լիազորագիր
   - հեռավորության վերաբերյալ ապացույց, 50կմ-ի կանոնը (տեԲս 3-րդ հավելվածի III գլխի 2-րդ հոդվածի 2.3. կետը)
   - նախկին ասոցիացիայի համաձայնության ապացույց

3. Եթե որևէ պարտադիր փաստաթուղթ կամ համաձայն ներքոհիշյալ 7-րդ հոդվածի թարգմանություն և/կամ պաշտոնական հաստատում բացակայում է համակարգում, ապա ենթակոմիտեն այդ մասին տեղեկացնում է դիմող ասոցիացիային:

Դիմումին ընթացք է տրվում միայն այն դեպքում, եթե բոլոր պարտադիր փաստաթղթերը կամ 7-րդ հոդվածով ամրագրված բոլոր անհրաժեշտ թարգմանություններն ու պաշտոնական հաստատումները պատշաճ կերպով ներկայացվել են:

4. Անհրաժեշտության դեպքում դիմող ասոցիացիան դիմումի հետ մեկտեղ կարող է ներկայացնել նաև այլ փաստաթղթեր: Ենթակոմիտեն ցանկացած ժամանակ կարող է պահանջել հավելյալ փաստաթղթեր:

**<u>Հոդված 7.</u> Նախկին ասոցիացիայի հաստատումը (դիրքորոշումը)**

1. Անչափահասի առաջին գրանցման կամ միջազգային տրանսֆերի դիմումը ստանալուն պես՝ ենթակոմիտեն հնարավորություն է ընձեռում նախկին ասոցիացիային ծանոթանալու համակարգում առկա բոլոր ոչ կոնֆիդենցիալ փաստաթղթերին:

Նախկին ասոցիացիան համակարգ է մուտքագրում իր դիրքորոշումը 7 օրվա ընթացքում: Անհրաժեշտության դեպքում վերջինս նա կարող է հավելյալ փաստաթղթեր մուտքագրել համակարգ:

2. Եթե նախկին ասոցիացիան չի մուտքագրում որևէ դիրքորոշում, ապա ենթակոմիտեն որոշում է կայացնում առկա փաստաթղթերի հիման վրա:

**<u>Հոդված 8.</u> Փաստաթղթերի լեզուն**

Եթե ներկայացվող փաստաթուղթը ՖԻՖԱ-ի չորս պաշտոնական լեզուներից որևէ մեկով առկա չէ, ապա ասոցիացիան պարտավոր է ներկայացնել կաԲմ տվյալ փաստաթղթի թարգմանությունը, կաԲմ տվյալ փաստաթղթերի հիմնական բովանդակությունն ամփոփող պաշտոնական հաստատում ՖԻՖԱ-ի չորս պաշտոնական լեզուներից մեկով: Այս կարգը խախտելու դեպքում ենթակոմիտեն կարող է հաշվի չառնել քննության մեջ գտնվող հարցը:

**<u>Հոդված 9.</u> Վերջնաժամկետները**

ՏՅՅ համակարգում հաստատված վերջնաժամկետները ունեն իրավական ուժ: Վերջնաժամկետները սահմանված կարգով տեղադրվում են համակարգում:

Փաստաթղթերը մուտքագրվում են ՏՅՅ՝ հաշվի առնելով տվյալ երկրի ժամային գոտով պայմանավորված վերջնաժամկետը:

**<u>Հոդված 10.</u> Որոշումների ծանուցումը, բողոք ներկայացնելու կարգը**

1. Կողմերը տեղեկացվում են ենթակոմիտեի որոշման մասին համակարգի միջոցով:

Ծանուցումը համարվում է ամբողջական, երբ որոշումը մուտքագրվում է համակարգ: Նման կարգով որոշումների ծանուցումը պարտադիր է:

2. Որոշումը ծանուցվում է կողմերին: Կողմերը ծանուցումը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում իրավունք ունեն գրավոր կերպով բողոքարկելու որոշումը:

Վերը նշված ժամանակահատվածում բողոք չներկայացնելու դեպքում, ենթակոմիտեի որոշումը մտնում է ուժի մեջ:

Որոշման բողոքարկման դեպքում ենթակոմիտեն, քննելով ներկայացրած բողոքը, հիմնավորված որոշում է կայացնում, որի մասին կողմերը տեղեկացվում են գրավոր ձևով:

Բողոքարկման ժամկետի հաշվարկը սկսում է որոշման մասին ծանուցումը ստանալու պահից սկսած:

**<u>Հոդված 11.</u> Ակադեմիաներում անչափահաս ֆուտբոլիստների գրանցումը**

1. Այն ակումբները, որոնց կից գործում են վերջիններիս հետ իրավաբանորեն, ֆինանսապես կամ դե ֆակտո կապված ակադեմիաներ, պարտավոր են ակադեմիա հաճախող բոլոր անչափահասների ցուցակները տրամադրել ՀՖՖ-ին:
2. Յուրաքանչյուր ասոցիացիա պարտավոր է ապահովել, որպեսզի որևէ ակումբի հետ իրավաբանորեն, ֆինանսապես կամ դե ֆակտո կապ չունեցող բոլոր ակադեմիաները՝
   ա. ներկայացնեն տվյալ ազգային առաջնություններին մասնակցող որևէ ակումբ. բոլոր ֆուտբոլիստները գրանցվում են ՀՖՖ-ում կամ հենց տվյալ ակումբում, կամ՝
   բ. մարզվելու նպատակով ակադեմիա հաճախող բոլոր անչափահասների ցուցակները տրամադրվեն ՀՖՖ-ին:
3. Յուրաքանչյուր ասոցիացիա գրանցում է անչափահասներին (նշվում են նրանց անուններն ու ծննդյան ամսաթվերը)՝ հիմնվելով ակումբների և ակադեմիաների տրամադրած տվյալների վրա:
4. Գրանցվելով ակադեմիաներն ու նրանց ֆուտբոլիստները պարտավորվում են ծավալել ֆուտբոլային գործունեություն՝ համաձայն ՖԻՖԱ-ի և ՀՖՖ կանոնադրությունների՝ հարգելով և զարգացնելով կազմակերպված ֆուտբոլի բարոյական սկզբունքները:
5. Համաձայն ՖԻՖԱ-ի Կարգապահական օրենսգրքի՝ սույն դրույթի ցանկացած խախտման դեպքում Կարգապահական կոմիտեի կողմից կիրառվում են պատժամիջոցներ:
6. Սույն կանոնակարգի 3-րդ հավելվածի III գլխի դրույթների պահանջները վերաբերում են նաև բոլոր այն անչափահաս ֆուտբոլիստների գրանցմանը, որոնք չեն հանդիսանում տվյալ երկրի քաղաքացի, որտեղ ցանկանում են գրանցվել:

# Գլուխ IV
# Ներքին տեղափոխությունը կարգավորող ընթացակարգ

**<u>Հոդված 1.</u> Սկզբունքներ**

1. ՀՖՖ որևէ ակումբում գրանցված խաղացողն իրավունք չունի խաղալու մեկ այլ ակումբի կազմում, քանի դեռ նախկին Ակումբը չի տրամադրել համաձայնությունը, իսկ նոր Ակումբը չի գրանցել (վերագրանցել) տվյալ ֆուտբոլիստին՝ համաձայն սույն հավելվածի դրույթների:
2. Ներքին տեղափոխության դեպքում ֆուտբոլիստը պետք է գրանցվի (վերագրանցվի) նոր Ակումբում սույն կանոնակարգի 3-րդ գլխում սահմանված դրույթներին համապատասխան:
3. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի տեղափոխության դեպքում նախկին Ակումբը կարող է համաձայնություն չտալ, եթե իր և խաղացողի միջև պայմանագրային վեճ է ծագել: Այս դեպքում Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը, նախկին Ակումբը և/կամ նոր Ակումբը լիազորված են բողոք ներկայացնելու ՀՖՖ: Այնուհետև ՀՖՖ-ն 10 օրվա ընթացքում որոշում կկայացնի ֆուտբոլիստին գրանցելու (վերագրանցելու) և նրա նկատմամբ մարզական պատժամիջոցներ կիրառելու վերաբերյալ: Ամեն դեպքում, պատժամիջոցներ կիրառելու վերաբերյալ որոշումը պետք է ընդունվի նախքան գրանցելը, իսկ գրանցումը չպետք է խոչընդոտի պայմանագրի խզման հետևանքով առաջացած փոխհատուցում ստանալու իրավունքին:
4. Ֆուտբոլիստի և նախկին Ակումբի միջև պարտք ու պահանջի առկայությունը չի կարող արգելք հանդիսանալ ֆուտբոլիստի ներքին տեղափոխության և վերագրանցման համար:
5. Ներքին տեղափոխության դեպքում գրանցման դիմումի հետ մեկտեղ պետք է ներկայացվի փոխհատուցման վճարը (այդ թվում՝ Մարզումային փոխհատուցման) հաստատող փաստաթղթերը (վճարման հանձնարարականի պատճենը և ստացված գումարի վերաբերյալ նախկին ակումբի կողմից լրացված ձևաթուղթը):
6. Ֆուտբոլիստի գրանցումը կարող է չեղյալ համարվել ՀՖՖ-ի Վեճերի Լուծման Պալատի որոշմամբ:

# ՀԱՎԵԼՎԱԾ 4

## Մարզումային փոխհատուցում

**<u>Հոդված 1.</u> Մարզումային փոխհատուցումը**

1. Խաղացողի մարզման և ուսուցման գործընթացը տեղի է ունենում 12-23 տարեկան հասակում: Մարզումային փոխհատուցումը ենթակա է վճարման սույն կանոնակարգի 20 և 21 հոդվածներում նշված դեպքերում մինչև 23 տարեկան խաղացողի համար՝ մինչև նրա 21 տարին լրանալը մարզման և ուսուցման համար կատարված ներդրումների հաշվարկով:
2. Մարզումային փոխհատուցում վճարելու պարտավորությունը պայմանավորված չէ պայմանագրի դադարեցման հետևանքով առաջացած որևէ պարտավորությամբ (այդ թվում նաև փոխհատուցմամբ):

**<u>Հոդված 2.</u> Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի մարզումային փոխհատուցման վճարումը**

1. Մարզումային փոխհատուցում պետք է վճարվի Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստին մարզած, կրթած Ակումբին(ներին)՝
   - ա/ եթե խաղացողը ստորագրում է իր առաջին պրոֆեսիոնալ պայմանագիրը,
   - բ/ երբ Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը տեղափոխվում է մի ակումբից մյուսը (պայմանագրի ընթացքում կամ ավարտից հետո) մինչև իր 23-րդ տարեդարձի Մրցաշրջանի ավարտը:
2. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի համար մարզումային փոխհատուցում չի վճարվում.
   - ա) եթե նախկին Ակումբն առանց որևէ հիմնավոր դրդապատճառի դադարեցրել է պայմանագիրը (պահպանվում են նախորդ Ակումբի իրավունքները),
   - բ) եթե խաղացողը տեղափոխվում է 4-րդ կարգի Ակումբ,
   - գ) եթե Պրոֆեսիոնալը տեղափոխվելիս կրկին ստանում է սիրողական կարգավիճակ,
   - դ) եթե Պրոֆեսիոնալը տեղափոխվում է այլ Ակումբ իր 23-րդ տարեդարձի Մրցաշրջանի ավարտից հետո:
   - ե) եթե պրոֆեսիոնալ ֆուտբոլիստը չի մասնակցել կազմակերպված ֆուտբոլին տեղափոխությանը նախորդող առնվազն երկու մրցաշրջանների ընթացքում:

**Յոդված 3. Սիրողական ֆուտբոլիստի մարզումային փոխհատուցման վճարումը**

1. Մարզումային փոխհատուցում պետք է վճարվի 12 տարին լրացած Սիրողական ֆուտբոլիստին մարզած, կրթած Ակումբին(ներին)՝
   ա) եթե Սիրողական ֆուտբոլիստը փոխում է իր կարգավիճակը (դառնում է Պրոֆեսիոնալ),
   բ) երբ Սիրողական ֆուտբոլիստը տեղափոխվում է մի Ակումբից մյուսը, մինչև իր 23-րդ տարեդարձի Մրցաշրջանի ավարտը:
2. Սիրողական ֆուտբոլիստի համար մարզումային փոխհատուցում չի վճարվում.
   ա) եթե խաղացողի 12 տարին չի լրացել,
   բ) եթե խաղացողը տեղափոխվում է 4-րդ կարգի Ակումբ,
   գ) եթե խաղացողը չի մասնակցել Կազմակերպված ֆուտբոլին տեղափոխությանը նախորդող առնվազն երկու մրցաշրջանների ընթացքում,
   դ) եթե խաղացողը տեղափոխվում է այլ Ակումբ իր 23-րդ տարեդարձի Մրցաշրջանի ավարտից հետո:
3. Սիրողական Ֆուտբոլիստի համար մարզումային փոխհատուցում վճարվում է անկախ այն հանգամանքից, թե տեղափոխությունը կատարվել է Սիրողական ֆուտբոլիստի և/կամ Ակումբի նախաձեռնությամբ:
4. Սիրողական ֆուտբոլիստի մարզումային փոխհատուցումը վճարելու պարտավորությունը որևէ պատճառաբանությամբ չի կարող դրվել նրա ծնողների և/կամ երրորդ անձի վրա:
5. Առանձին դեպքերում, երբ Սիրողական ֆուտբոլիստի տեղափոխությունը հետևանք է նախկին Ակումբի կողմից ոչ մարզական, հակամանկավարժական և այլ անթույլատրելի դրսևորումների, ՀՖՖ-ի Վեճերի լուծման պալատը իրավասու է որոշում կայացնելու մարզումային փոխհատուցում չվճարելու վերաբերյալ:

**Յոդված 4. Մարզումային փոխհատուցում վճարելու պարտավորությունը**

1. Երբ խաղացողն առաջին անգամ գրանցվում է իբրև Պրոֆեսիոնալ, ապա նրան գրանցող Ակումբը պարտավոր է 30-օրյա ժամկետում մարզումային փոխհատուցում վճարել բոլոր այն ակումբներին, որտեղ գրանցված է եղել խաղացողը (համաձայն Ֆուտբոլիստի Անձնագրում նկարագրված կարիերայի պատմության)՝ սկսած նրա 12 տարին լրանալու Մրցաշրջանից: Ակումբին(ներին) վճարման

ենթակա գումարները հաշվարկվում են համամասնության սկզբունքով՝ համաձայն տվյալ ակումբում խաղացողի մարզման ժամանակահատվածի: Գրանցող Ակումբը պարտավոր է վճարման հանձնարարագիրը(հանձնարարագրերը) /փոխանցում/ ներկայացնել ՀՖՖ վերը նշված 30-օրյա ժամկետում:

2. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի տեղափոխության դեպքում մարզումային փոխհատուցում պետք է վճարվի միայն նրա նախկին Ակումբին՝ տվյալ Ակումբում խաղացողի արդյունավետ մարզման ժամանակահատվածի համար:
3. Սիրողական ֆուտբոլիստին գրանցել ցանկացող Ակումբը պարտավոր է մարզումային փոխհատուցում վճարել խաղացողի նախկին Ակումբին՝ տվյալ Ակումբում խաղացողի արդյունավետ մարզման ժամանակահատվածի համար: Վճարման հանձնարարագիրը /փոխանցում/ ներկայացվում է ՀՖՖ գրանցման դիմումի հետ միասին:
4. Մարզումային փոխհատուցումը ենթակա է վճարման ՀՖՖ-ին մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագրերի իրագործման նպատակով՝
   ա) ներքին տեղափոխության դեպքում, երբ Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստին առաջին անգամ գրանցող Ակումբի և նրան մարզած, կրթած որևէ Ակումբի(ների) միջև կապ չի հաստատվում կամ այդ Ակումբը(ները) ի հայտ չեն գալիս խաղացողի գրանցման 3 ամիսների ընթացքում,
   բ) երբ ֆուտբոլիստին մարզած, կրթած ակումբը երկու անընդմեջ խաղաշրջանների ընթացքում դադարեցրել է ֆուտբոլային գործունեությունը և չի մասնակցում կազմակերպված ֆուտբոլին:

Փոխհատուցում ստանալու իրավունքը վերականգնվում է ֆուտբոլային գործունեությունը վերսկսելու դեպքում:

5. Միջազգային տրանսֆերի դեպքում (Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի), եթե խաղացողին գրանցող Ակումբի և նրան մարզած, կրթած որևէ Ակումբի(ների) միջև կապ չի հաստատվում կամ այդ Ակումբը(ները) ի հայտ չեն գալիս խաղացողի՝ գրանցված լինելու 18 ամիսների ընթացքում, ապա Մարզումային փոխհատուցումը վճարվում է այն երկրի(ների) Ասոցիացիային(ներին), որտեղ պրոֆեսիոնալը մարզվել է՝ մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագրերի իրագործման նպատակով:
6. Մարզումային փոխհատուցման բոլոր վճարումները պետք է կատարվեն միայն փոխանցման կարգով՝ հաշվեհամարից հաշվեհամար: Մարզումային փոխհատուցման կանխիկ վճարումներն ակումբների միջև արգելվում են:

**<u>Հոդված 5.</u> Մարզումային ծախսեր**

1. Մարզումային ծախսերը խաղացողների մարզումը և զարգացումն ապահովելու նպատակով Ակումբի կողմից տարեկան կտրվածքով կատարած ուղղակի ներդրումներն են՝ «ֆուտբոլիստի գործոն»-ի միջին հաշվարկով: «Ֆուտբոլիստի գործոն»-ը ընդհանուր մարզվողների և պատրաստված Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների քանակի հարաբերակցությունն է:
2. Միջազգային տրանսֆերի դեպքում մարզումային փոխհատուցումը հաշվարկելու նպատակով ակումբները, ըստ մարզումային ծախսերի, ՖԻՖԱ-ի կողմից դասակարգված են 4 կատեգորիաների, որը հրապարակված է ՖԻՖԱ-ի վեբկայքում և սույն կանոնակարգի 7-րդ հավելվածում: Ակումբների կատեգորիաները նորացվում են յուրաքանչյուր տարվա վերջում: Ասոցիացիաները պարտավոր են պարբերաբար նորացնել ՏՀՀ մուտքագրած իրենց ակումբների մարզումային կատեգորիաները:
3. Ներքին տեղափոխությունների համար ՀՖՖ ակումբները, ըստ մարզումային ծախսերի, ՀՖՖ-ի կողմից դասակարգված են նաև 4 կատեգորիաների, որը նույնպես հրապարակված է սույն կանոնակարգի 7-րդ հավելվածում:
4. 4.Ակումբների դասակարգումը և մարզումային ծախսերը անհրաժեշտության դեպքում կարող են վերանայվել յուրաքանչյուր օրացուցային տարվա վերջում:
5. 5. Ներքին տեղափոխությունների համար նոր ընդգրկվող Ակումբի կարգը որոշվում է ըստ առաջնությունների մասնակցության՝ Առաջին խմբի առաջնությանը՝ 3-րդ կատեգորիա, մանկապատանեկան առաջնություններին՝ 4-րդ կատեգորիա: Ակումբի կարգը շնորհվում է ՀՖՖ Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կոմիտեի որոշմամբ:
6. 6. Ակումբը, որը 3 տարի շարունակ չի զբաղվել կազմակերպված ֆուտբոլով, կորցնում է իր կարգը և հանվում է ՀՖՖ գրանցումից:

**<u>Հոդված 6.</u> Մարզումային փոխհատուցման հաշվարկը**

1. Որպես կանոն՝ խաղացողի նախկին Ակումբին(ներին) վճարվելիք մարզումային փոխհատուցումը հաշվարկելու համար անհրաժեշտ է վերցնել այն ծախսերը, որոնք կկատարվեին նոր Ակումբի կողմից տվյալ խաղացողին մարզելու դեպքում:

Գրանցման գործընթացը բարելավելու և ֆուտբոլիստին՝ (օրինակ՝ 12 տարին լրանալուց հետո) Ակումբում գրանցելու դիմումը առավելագույնս արագ ՀՖՖ ներկայացնելու նպատակով Մարզումային փոխհատուցման

գումարը հաշվարկել ըստ եռամսյակների՝ հետևյալ կարգով.

- եթե ֆուտբոլիստի գրանցման ժամանակահատվածը Ակումբում տվյալ տարում կազմում է մինչև մեկ եռամսյակ /92 օր/, ապա փոխհատուցման գումարը հաշվարկվում է որպես տարեկանի 1/4-ը:
- եթե ֆուտբոլիստի գրանցման ժամանակահատվածը Ակումբում տվյալ տարում կազմում է մեկ եռամսյակից մինչև մեկ կիսամյակ /93-ից 184 օր/, ապա փոխհատուցման գումարը հաշվարկվում է որպես տարեկանի 1/2-ը:
- եթե ֆուտբոլիստի գրանցման ժամանակահատվածը Ակումբում տվյալ տարում կազմում է մեկ կիսամյակից մինչև երեք եռամսյակ /185-ից 276 օր/, ապա փոխհատուցման գումարը հաշվարկվում է որպես տարեկանի 3/4-ը:
- եթե ֆուտբոլիստի գրանցման ժամանակահատվածը Ակումբում տվյալ տարում կազմում է երեք եռամսյակից մինչև մեկ տարի /227-ից 366 օր/, ապա փոխհատուցման գումարը հաշվարկվում է որպես մեկ տարվա:

2. Երիտասարդ խաղացողների մարզումային փոխհատուցման անհիմն բարձր գումարներից խուսափելու համար, 12-15տ. ընթացքում (4 խաղաշրջան) նրանց մարզումային ծախսերը հաշվարկվում են 4-րդ կարգի Ակումբների մարզումային ծախսերին համապատասխան: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ ֆուտբոլիստի տեղափոխությունը կատարվում է մինչև նրա 18 տարին լրանալը, որի դեպքում 12-15տ. ընթացքում ֆուտբոլիստի մարզումային ծախսերը հաշվարկվում են ըստ նոր Ակումբի կարգի (կատեգորիայի):
3. Առաջին անգամ որպես Պրոֆեսիոնալ գրանցվելիս վճարվելիք մարզումային փոխհատուցումը հաշվարկվում է հետևյալ հանրագումարով.

   ա/ 4-րդ կարգի Ակումբի մարզումային ծախսերը՝ բազմապատկած խաղացողի 12-ից մինչև 15 տարեկան դառնալու ընթացքում մարզումների տարիների թվով,

   բ/ Նոր Ակումբի մարզումային ծախսերը՝ բազմապատկած խաղացողի 16-ից մինչև 21 տարեկան դառնալու ընթացքում մարզումների տարիների թվով:
4. Խաղացողների հետագա տրանսֆերների (տեղափոխության) դեպքում մարզումային փոխհատուցման հաշվարկը հիմնվում է նոր Ակումբի մարզումային ծախսերի վրա՝ բազմապատկած նախկին Ակումբում մարզված տարիների թվով:
5. Երբ նախկին և նոր Ակումբները պայմանավորվել են Պրոֆեսիոնալ

ֆուտբոլիստի տեղափոխության վերաբերյալ, ապա փոխհատուցման գումարը չի կարող լինել պակաս, քան մարզումային փոխհատուցման գումարը:

6. ՀՖՖ-ն/ՖԻՖԱ-ն կարող է քննարկել վճարման ենթակա մարզումային փոխհատուցման գումարի չափին վերաբերող վեճերը և հստակեցնել այդ գումարը, եթե ակնհայտ է, որ այն չի համապատասխանում քննարկվող դեպքին:

# ՀԱՎԵԼՎԱԾ 5

## Համերաշխության մեխանիզմը

**<u>Հոդված 1.</u> Համերաշխության բաշխում**

1. Եթե Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստն իր պայմանագրի գործողության ընթացքում տեղափոխվում է, ապա նախկին Ակումբին վճարվող ցանկացած փոխհատուցման գումարի 5%-ը (բացառությամբ մարզումային փոխհատուցումից) պետք է հանվի այդ փոխհատուցման ընդհանուր գումարից և նոր Ակումբի կողմից որպես Համերաշխության գումար բաշխվի բոլոր այն ակումբներին, որոնք տարիների ընթացքում զբաղվել են խաղացողի մարզմամբ ու կրթմամբ:
2. Այս Համերաշխության բաշխումն արտացոլում է այն տարիները (համապատասխան հաշվարկով, եթե 1 տարուց պակաս է), երբ խաղացողը գրանցված է եղել համապատասխան Ակումբում(ներում)12-23 տարեկան հասակում՝ հետևյալ կարգով.
    - 12 տարեկան 5%
      (այսինքն՝ փոխհատուցման ամբողջ գումարի 0.25%-ը)
    - 13 տարեկան 5%
      (այսինքն՝ փոխհատուցման ամբողջ գումարի 0.25%-ը)
    - 14 տարեկան 5%
      (այսինքն՝ փոխհատուցման ամբողջ գումարի 0.25%-ը)
    - 15 տարեկան 5%
      (այսինքն՝ փոխհատուցման ամբողջ գումարի 0.25%-ը)
    - 16 տարեկան 10%
      (այսինքն՝ փոխհատուցման ամբողջ գումարի 0.5%-ը)
    - 17 տարեկան 10%
      (այսինքն՝ փոխհատուցման ամբողջ գումարի 0.5%-ը)
    - 18 տարեկան 10%
      (այսինքն՝ փոխհատուցման ամբողջ գումարի 0.5%-ը)
    - 19 տարեկան 10%
      (այսինքն՝ փոխհատուցման ամբողջ գումարի 0.5%-ը)
    - 20 տարեկան 10%
      (այսինքն՝ փոխհատուցման ամբողջ գումարի 0.5%-ը)
    - 21 տարեկան 10%
      (այսինքն՝ փոխհատուցման ամբողջ գումարի 0.5%-ը)
    - 22 տարեկան 10%

(այսինքն՝ փոխհատուցման ամբողջ գումարի 0.5%-ը)

- 23 տարեկան 10%
  (այսինքն՝ փոխհատուցման ամբողջ գումարի 0.5%-ը):

3. Ներքին տեղափոխությունների դեպքում Համերաշխության գումարի հաշվարկ և բաշխում չի իրականացվում:

**<u>Հոդված 2</u> Վճարման ընթացակարգը**

1. Համաձայն նախորդ հոդվածում նշված պայմանների՝ նոր Ակումբը պետք է վճարի համերաշխության գումարը ֆուտբոլիստին մարզող Ակումբին(ներին) խաղացողի գրանցումից ոչ ուշ, քան 30 օրվա, իսկ հանգամանքներից կախված կամ հետաձգված վճարումների դեպքում՝ այդպիսի վճարումներից հետո 30 օրվա ընթացքում:
2. Նոր Ակումբը պատասխանատվություն է կրում Համերաշխության գումարի հաշվարկման և բաշխման համար՝ համաձայն Ֆուտբոլիստի անձնագրում նշված կարիերայի պատմության: Անհրաժեշտության դեպքում ֆուտբոլիստը պետք է աջակցի նոր Ակումբին այս պարտավորությունների կատարման գործում:
3. Եթե Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի նոր և նրան մարզած Ակումբներից որևէ մեկի միջև կապ չի հաստատվում նրա տեղափոխության 18 ամիսների ընթացքում, ապա Համերաշխության գումարը պետք է վճարվի այն երկրի Ասոցիացիայի(ներին), որտեղ Պրոֆեսիոնալը մարզվել է՝ մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման ծրագրերի իրագործման նպատակով:

# ՀԱՎԵԼՎԱԾ 6

ՀՖՖ Առաջին փոխնախագահի
Գործադիր տնօրեն
<u>պարոն Ա. Մինասյանին</u>

## <u>Դ Ի Մ Ո Ւ Մ</u>

«ՀՖՖ ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի» համաձայն ______________________ Ակումբը /դպրոցը, կազմակերպությունը/ խնդրում է գրանցել / վերագրանցել հետևյալ ֆուտբոլիստներին Ակումբի կազմում պրոֆեսիոնալ / սիրողական ֆուտբոլի / ֆուտզալի ***(բոլորի դեպքում ընդգծել համապատասխանը)*** մրցումներին մասնակցելու համար:

| | **ֆուտ-ի անձ. համարը** | **ազգանուն, անուն, հայրանուն** | **ծննդյան օր, ամիս տարի** | **գրանցման վերջին ակումբը** | **ծանուցում** |
|---|---|---|---|---|---|
| 1 | | | | | |
| 2 | | | | | |
| 3 | | | | | |
| 4 | | | | | |
| 5 | | | | | |
| 6 | | | | | |
| 7 | | | | | |
| 8 | | | | | |
| 9 | | | | | |
| 10 | | | | | |
| 11 | | | | | |
| 12 | | | | | |
| 13 | | | | | |
| 14 | | | | | |
| 15 | | | | | |
| 16 | | | | | |

Կից ներկայացվում է՝

ֆուտբոլիստի անձնագիր՝ _____ - փոխհատուցման վճ/հ պատճեն՝_____

քաղ.անձնագրի պատճեն՝ _____ - ակումբի գր-թյուն՝ _______________

ծննդականի պատճեն՝ ________ - տեղեկանք՝ ______________________

լուսանկար՝ __________________ - պայմանագիր՝ ___________________

Տեղափոխության պայմանագրի բացակայության պարագայում որևէ Ակումբի /դպրոցի, կազմակերպության/ կողմից ֆուտբոլիստի տեղափոխության հետ կապված նախապահանջ ներկայացնելու կամ մարզումների փոխհատուցման վճարման վերաբերյալ վեճեր առաջանալու դեպքում պարտավորվում ենք կատարել ՀՖՖ-ի Խաղացողների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի պահանջները և որոշումները՝ կապված տեղափոխության պայմանների կատարման, այդ թվում մարզումային փոխհատուցման և համերաշխության գումարների վճարման վերաբերյալ:

Ղեկավար [-------------------------------]
ստորագրողի ազգանունը

կ.տ.

« »---------------201 թ.

## ՀԱՎԵԼՎԱԾ 7

### Մարզումային ծախսերն ըստ կարգերի

| Ակումբի կարգը | Միջազգային տրանսֆեր (եվրո) | Ներքին տեղափոփություն (դրամ) |
|---|---|---|
| 1-ին կարգ | 90 000 | 80 000 |
| 2-րդ կարգ | 60 000 | 60 000 |
| 3-րդ կարգ | 30 000 | 40 000 |
| 4-րդ կարգ | 10 000 | 20 000 |

### Ակումբների բաշխումն ըստ կարգերի

| Ակումբի անվանումը | վայրը | կարգը | |
|---|---|---|---|
| | | Միջազ-գային տրանսֆեր | Ներքին տեղափո-խություն |
| «Փյունիկ» ՖԱ | Երևան | 3 | 1 |
| «Բանանց» ՖԱ | Երևան | 3 | 1 |
| «Միկա »ՖԱ | | 3 | 1 |
| «Արարատ» ՖԱ | Երևան | 4 | 2 |
| «Գանձասար» ՖԱ | Կապան | 4 | 2 |
| «Կիլիկիա» ՖԱ | Երևան | 4 | 2 |
| «Շիրակ» ՖԱ | Գյումրի | 4 | 2 |
| «Ուլիս» ՖԱ | Երևան | 4 | 2 |
| «Հայկ» ՖԱ | Գորիս | 4 | 2 |
| «Էրեբունի-Դիլիջան» ՍԱ | Դիլիջան | 4 | 2 |
| «Եզերք» ՖԱ | Նոյեմբերյան | 4 | 4 |
| «Ալաշկերտ» ՖԱ | Երևան | 4 | 3 |
| «Քինգ դելյուքս» ՖԱ | Աբովյան | 4 | 3 |
| «Էրեբունի» թ.1 մ/դպ | Երևան | 4 | 3 |
| «ՕՀՊՄՔ» | Երևան | 4 | 3 |
| «Մետալուրգ» ՖԱ | Ալավերդի | 4 | 3 |
| Վեդիի մ/դպ | Վեդի | 4 | 3 |
| Արթիկի մ/դպ | Արթիկ | 4 | 3 |
| Մնացած բոլոր ակումբները, թիմերը, մ/դպրոցները և այլն | - | 4 | 4 |

# ՀԱՎԵԼՎԱԾ 8

## Ֆուտզալի խաղացողների կարգավիճակի և տեղափոխության կանոնները

**<u>Հոդված 1.</u> Ընդհանուր դրույթներ**

1. Ֆուտզալ խաղացողների կարգավիճակի և տեղափոխության կանոնները հաստատում են գլոբալ և պարտադիր դրույթներ ֆուտզալ խաղացողների կարգավիճակի, կազմակերպված ֆուտբոլին մասնակցելու նրանց իրավունքի և տեղափոխման վերաբերյալ:
2. ՀՖՖ-ի և ՖԻՖԱ-ի ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգերը վերաբերում են նաև ֆուտզալ խաղացողներին, եթե սույն հավելվածում և ՖԻՖԱ-ի ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի 6-րդ հավելվածում զետեղված որևէ տարամետ դրույթ չի նախատեսում ֆուտզալին վերաբերող մեկ այլ կանոն:

**<u>Հոդված 2.</u> Խաղացողների գրանցումը**

1. Խաղացողը միևնույն ժամանակահատվածում կարող է գրանցվել միայն մեկ ֆուտզալի Ակումբում: Խաղացողը, այնուամենայնիվ իրավասու է գրանցվել նաև միևնույն կամ այլ ասոցիացիային պատկանող ֆուտբոլային Ակումբում ևս:

**<u>Հոդված 3.</u> Պայմանագրի դրույթների պահպանումը**

1. Ֆուտբոլային Ակումբի հետ պայմանագիր կնքած պրոֆեսիոնալ խաղացողը կարող է երկրորդ պրոֆեսիոնալ պայմանագիր կնքել մեկ այլ ֆուտզալի Ակումբի հետ, եթե նա ունի ֆուտբոլային Ակումբի կողմից տրամադրված գրավոր համաձայնություն: Ֆուտզալի Ակումբի հետ պայմանագիր ունեցող խաղացողը կարող է երկրորդ պայմանագիրը կնքել մեկ այլ ֆուտբոլային Ակումբի հետ, եթե նա ունի ֆուտզալի Ակումբի կողմից տրամադրված գրավոր համաձայնություն:

**<u>Հոդված 4.</u> Միջազգային տրանսֆերային սերտիֆիկատ**

1. Ֆուտզալի ՄՏՍ-ի ձևը պետք է տարբերվի ֆուտբոլում կիրառվող ՄՏՍ-ից՝ ՄՖՏՍ:

**<u>Հոդված 5.</u> Կարգապահական պատժամիջոցների կիրառումը**

1. Խաղացողի ֆուտզալում ստացած որակազրկումը և այլ պատժամիջոցները տարածվում են միայն նրա ֆուտզալի մասնակցության վրա: Նմանապես, ֆուտբոլում խաղացողի նկատմամբ կիրառված որակազրկումը և այլ պատժամիջոցները պետք է ազդեն միայն իր ֆուտբոլային ակումբի խաղերին ունեցած մասնակցության վրա:
2. Ժամկետային որակազրկումն ու պատժամիջոցը (որակազրկում որոշակի ժամկետով) ազդում են խաղացողի մասնակցությանը թե՛ ֆուտզալի և թե՛ ֆուտբոլային հանդիպումներին իր ակումբի(ների) կազմում, անկախ այն հանգամանքից՝ խախտումը գրանցվել է ֆուտզալում կամ ֆուտբոլում:
3. Ասոցիացիան պարտավոր է յուրաքանչյուր ժամկետային պատժամիջոցի մասին տեղեկացնել մյուս ասոցիացիային, եթե խաղացողը գրանցված է երկու տարբեր ասոցիացիաներին պատկանող ֆուտզալի և ֆուտբոլային Ակումբներում:

## ՀԱՎԵԼՎԱԾ 9

## Պատասխանատվությունը կանոնակարգի դրույթները խախտելու համար

Սույն կանոնակարգի դրույթները խախտելու համար Վեճերի Լուծման Պալատը կարող է կիրառել հետևյալ պատժամիջոցները.

1. Ֆուտբոլիստի կողմից միևնույն ժամանակահատվածի համար մեկից ավելի աշխատանքային պայմանագրեր կնքելու համար՝
   - որակազրկում 3-12 ամիս ժամկետով և/կամ
   - տուգանք մինչև 150 000 դրամի չափով:
2. Ֆուտբոլիստի կողմից գործող պայմանագրի ավարտից 6 ամսից շուտ նոր Ակումբի հետ բանակցություններ վարելու համար՝
   - որակազրկում 1-6 ամիս ժամկետով և/կամ
   - տուգանք մինչև 100 000 դրամի չափով :
3. Ֆուտբոլիստի գրանցման կարգը խախտելու համար՝
   - գրանցումն անվավեր ճանաչել և/կամ
   - զրկել Ակումբին նոր ֆուտբոլիստներ գրանցելու իրավունքից 1-6 ամիս ժամկետով և/կամ
   - տուգանք մինչև 150 000 դրամի չափով:
4. Ակումբի կողմից ֆուտբոլիստի հետ աշխատանքային պայմանագրի կնքման կարգը խախտելու դեպքում՝
   - տուգանք մինչև 150 000 դրամի չափով:
5. Ակումբի կողմից աշխատանքային պայմանագիրը սահմանված ժամկետում գրանցման չներկայացնելու դեպքում՝
   - տուգանք յուրաքանչյուր ուշացված օրվա համար 1000 դրամի չափով:
6. Ակումբի կողմից ֆուտբոլիստի տեղափոխության պայմանագրի պայմանները և/կամ ֆուտբոլիստի հետ կնքած աշխատանքային պայմանագրի պարտավորությունները խախտելու դեպքում՝
   - տուգանք Ակումբին մինչև 300 000 դրամի չափով և/կամ
   - արգելք Ակումբին՝ գրանցելու նոր ֆուտբոլիստներ և համապատասխանաբար տեղափոխության պայմանագրեր մինչև 12 ամիս ժամկետով:
7. «Վարձակալող» Ակումբի կողմից ֆուտբոլիստի «վարձակալության» պայմանով տեղափոխության պայմանագրի պայմանները և/կամ

այդ ֆուտբոլիստի հետ կնքած աշխատանքային պայմանագրի պարտավորությունները խախտելու դեպքում՝

- տուգանք Ակումբին մինչև 300 000 դրամի չափով և/կամ
- արգելք Ակումբին՝ գրանցելու «վարձակալության» պայմանով նոր ֆուտբոլիստներ և համապատասխանաբար «վարձակալության» պայմանով տեղափոխության պայմանագրեր մինչև 12 ամիս ժամկետով:

8. Ակումբի կողմից Մարզումային փոխհատուցման վճարումների ժամկետի խախտման դեպքում՝
   - մրցաշարային միավորների նվազեցում՝ (Կարգապահական կոմիտեի որոշմամբ) և/կամ
   - արգելք Ակումբին գրանցելու նոր ֆուտբոլիստներ և համապատասխանաբար տեղափոխության պայմանագրեր մինչև 12 ամիս ժամկետով:
9. Վեճերի Լուծման Պալատի որոշումները սահմանված ժամկետում չկատարելու դեպքում՝
   - տուգանք մինչև 500 000 դրամի չափով և/կամ
   - մրցաշարային միավորների նվազեցում՝ (Կարգապահական կոմիտեի որոշմամբ) և/կամ
   - զրկում առաջնությանը մասնակցելու իրավունքից:
10. Ակումբի կողմից պայմանագիրը առանց հիմնավոր դրդապատճառների խախտելու կամ ֆուտբոլիստին պայմանագրի խախտում դրդելու դեպքում՝
    - արգելք Ակումբին գրանցելու նոր ֆուտբոլիստներ 3-ից 12 ամիս ժամկետով և/կամ
    - տուգանք Ակումբին մինչև 300 000 դրամի չափով:
11. Որևէ Ակումբի կողմից այլ Ակումբին կամ ֆուտբոլիստին պայմանագրի խախտում դրդելու դեպքում՝
    - արգելք Ակումբին գրանցելու նոր ֆուտբոլիստներ 3-ից 12 ամիս ժամկետով և/կամ
    - տուգանք Ակումբին մինչև 300 000 դրամի չափով:
12. Պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի կողմից Պաշտպանված ժամանակահատվածի ընթացքում իր նախաձեռնությամբ առանց հիմնավոր դրդապատճառների պայմանագրի վաղաժամ լուծման դեպքում՝
    - Կազմակերպված Ֆուտբոլին մասնակցելու իրավունքից զրկում 4-ից 6 ամիս ժամկետով և/կամ

- տուգանք մինչև 150 000 դրամի չափով:

13. Ֆուտբոլիստների գործակալի կողմից սույն Կանոնակարգի կամ գործակալի գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտերի դրույթների խախտման դեպքում՝
    - զգուշացում և/կամ
    - արտոնագրի զրկում և/կամ
    - տուգանք մինչև 300 000 դրամի չափով:
14. Ակումբի կողմից այլ Ակումբին փոխհատուցման վճարման պարտավորությունները և/կամ գործակալի հետ կնքված պայմանագրի դրույթները չկատարելու դեպքում՝
    - տուգանք Ակումբին մինչև 500 000 դրամի չափով և/կամ
    - արգելք Ակումբին գրանցելու նոր ֆուտբոլիստներ 3-ից 12 ամիս ժամկետով:
15. Ակումբի կողմից համերաշխության մեխանիզմի խախտման դեպքում՝
    - տուգանք Ակումբին մինչև 500 000 դրամի չափով և/կամ
    - արգելք Ակումբին գրանցելու նոր ֆուտբոլիստներ 3-ից 12 ամիս ժամկետով:
16. Սույն Կանոնակարգի հավելված 1-ի դրույթների խախտման դեպքում՝
    - զգուշացում և/կամ
    - տուգանք մինչև 500 000 դրամի չափով և/կամ
    - տեխնիկական պարտության գրանցում այն խաղի(երի) համար, որին մասնակցել է ֆուտբոլիստը, և որով Ակումբը սահմանափակել է նրա մասնակցությունը ազգային հավաքական թիմերում:
17. Ֆուտբոլիստի Անձնագրի կորստի դեպքում՝
    - տուգանք Ակումբին 5000 դրամի չափով:
18. Խաղացողի Մարզումային փոխհատուցումը վճարելու պարտավորությունը նրա ծնողների և/կամ երրորդ անձանց վրա դնելու դեպքում՝
    - տուգանք Ակումբին 150 000 դրամի չափով:
19. Ֆուտբոլային սուբյեկտների պայմանագրերը, պայմանագրերի փոփոխումը և լուծումը սահմանված ժամկետներում գրանցման չներկայացնելու դեպքում ակումբը տուգանվում է 1000 դրամ յուրաքանչյուր ուշացած օրվա համար:

Սույն հավելվածով նախատեսված տուգանքները ենթակա են վճարման ՀՖՖ որոշման կայացման պահից 30 օրվա ընթացքում:

# ՆՇՈՒՄՆԵՐ